

Hentchak :

Organe Central
DU PARTI

HENTCHAKISTE

ՀԵՉԱԿ

Journal Arménien

mensuel

XX Année

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Ք Ր Ե Ն Ն Ե Ր Գ

— 1887-1907 —

Ռուս-թրքական պատերազմը ամենայն կատա-
ղութեամբ առաջ էր տարուած. սկզբնական յաջողու-
թիւններէն յետոյ՝ տաճիկները պարտութեան դռնու-
թիւնն էին քամում: Պատերազմի բախտով շահա-
գրողութեամբ ամբողջ Իսլամը տխուր, ամօթահար զը-
րութիւն ունէր. նրա կողքին ապրող Հայ ժողովուրդը ար-
տաքոյ կարգի խանդավառութեան և Հրճուանքի մէջ
էր: Տաճիկ-Հայ ժողովուրդը միայն ծածուկ, ձեռքի
տակից չէր որ օգնած էր ռուս զորաբանակներին և
նրա յառաջխաղացմանը նպաստած իր առաջնորդնե-
րով, պաշարեղէնի Հայթապութեամբ, ո՛չ, այլ նա ամէն
տեղ Հրապարակապէս իր անկեղծ և անվերապահ
Համակրութիւնն էր արտայայտած դէպի «քրիստոնե-
այ եղբայր»: Կարնեցիները խաչով-խաչվառով, կը-
րօնական մի Հանդիսական արարողութեամբ, ուրա-
խութեան ծափերով, ռուս զորքերին ընդունեցին: Հա-
յերը ամէն կողմ բարձրաձայն երգում էին ռուսական
յաղթութիւնները և օսմանցու պարտութիւնները ու,
միամտաբար, օգի ալիքներին տալիս իրենց վերահաս ա-
պստութեան (ակնկալութիւնը՝ ռուս «կորուկ զէնքի»
շնորհով: — Դեռ այդ ժամանակները «քրիստոնեայ
եղբայր» իր դիմակը վալը չէր առել: —

Տաճիկները այդ բոլորը տեսնում էին, նրանք
ամէն ինչ գիտէին, բայց ձայն չէին կարողանում
հանել, որովհետեւ սուրը իրենց կրծքին էր ծան-
րացած: Ոյս, քէն, ատելութիւն ամբարուած մնում էր
նրանց սրտի ծածուկ խորշերում:

Պատերազմը վերջացաւ:

Սան-Սթեֆանօյի, Բերլինի, Կիպրոսի դաշնադը-
րութիւնները խոշոր յոյսերի յենակետեր էին տուել
Հայ ժողովրդին, ամէն ոք, այս անգամ, մօտալուտ
փրկութիւնը սպասում էր Եւրոպական Մեծ քրիս-
տոնեայ պետութիւններից:

Անցան ամիսներ, գործուցան տարիներ, բայց
պետութեան խոստումները, միջազգային յանձնառու-
թիւնները բարեփոխիչ ոչինչ բերեցին Հայերին: Ու
սկսուեց դրաման:

Արշալոյսի զէնքի մզմուսնից Հապիւ ազատ-

ւած՝ թուրք բռնապետութեան ներկայացուցիչները նո-
րից սկսան ձեռք առնել իրենց աւանդական քաղա-
քականութեան սովորական լարերը: Օգտուել Արևելեան
Խնկրով շահագրգռուող պետութիւնների Հակամարտ
շահերից, ունեցած քաղաքական ձգտումներից և նը-
րանց առաջ երկաւառութեան, կռուի նոր «ոսկոր-
ներ» նետել, — այդ բոլորը լի ու լի կերպով կա-
տարուեցան վարպետութեամբ և արագ: Գերմանիան իր
Հեռաւոր շահերը ի նկատի ունենալով՝ թրքական Հա-
շիւներին առանձին ձեռնառու տրամադրութիւն ցոյց տը-
ւեց: Թուրքը՝ անապատի այդ անհեռատես զաւակը,
դէպի գերմանական ցուցադրութեամբ Համակրութիւնը, խե-
լացեղորէն, անտարբեր չմտաց: Ամէն կանխօրէն նա
արաւ անմիջական ճնշումներից ազատուելու յոյսով:

Եւրոպական ներդաշնակութեան և պետութեանց
Համախմբումների բացակայութիւնը, տիրող «վիճուած
խաղաղութիւնը», փոխադարձ կասկածը և անակնկալ
ընդհանրան երկիւղը՝ այդ բոլորը միջոց տուեցին օս-
մանեան բռնապետին շունչ առնել և գործի սկսել:
Ու նա գործի սկսաւ:

Օսմանեան պետութիւնը միատարրացնել, այ-
լատարբերից Հայերին, մանաւանդ, տկարացնել, ար-
մատահան անել — դա իր նպատակն էր. միջոց-
ները — քիւրդ, չերքէզ, թուրք, լազ, տարբերին նրա
դէմ հանել, մասնաւոր զրգուծով և վարչական
առանձին տնօրինութիւններով: Այդ Հերիք չլինե-
լով՝ դրսից եկած մուհաճիրներին Հայերին բնակա-
կից արեց և նրանցից քաջքայող ոչմեր կազմեց, ա-
մեն ինչ յաջորդական, բայց կանխադեռած, որոշ
նպատակի համար:

Ու դրա վրայ աւերացան, բարդուցան կառա-
վարական տուրքերը՝ մէկը միւսից ծանր — Հայ ժո-
ղովրդի, նրա աշխատաւոր դասակարգի դրութիւնը
իրօք եղաւ անտանելի:

Կառավարական կողոպուտը, խտրութիւնները,
Հարածանքը իր դադարեցնելու հասաւ, մի բան
պարզ էր, — որ Հայաստան պիտի լինէր՝ առանց
Հայի: «Հայկական հարցը ջնջելու համար՝ պէտք
էր ջնջել հայը»:

«Թիւրքիայի ապագան Անատոլիայում, Հայաս-
տանում էր, ուստի տեղի վտանգաւոր տարբը
պէտք էր դատարկել և նրա տեղը ապահովը՝
Իսլամը դնել» — դա էր այն ընդհանուր նշանաբանը,

որ օրը ցերեկով դործադրութեան սկսեցին զնեւ թուրք կառավարութիւնը և իր ծածուկ ու յայտնի դործիքները:

Դա 80-ական թուականներին էր: Հայերը աչքները դարձրին դէպի Եւրոպա, աղերսեցին, նրան յիշեցրին Հանդիսապէս տուած իր խոստումները, — բայց այդ բոլորը անարձագանք:

Երեկ խանդավառ, իսկ այսօր յուսահատուող մասը իր աչքը նորից դարձրեց դէպի օսմանեան գահոյքի ոտքերը և կրկին նրանից ուզեց յուսալ իրեն վիճակի ամօքումը: Յուսախաբութիւն ամէն կողմից:

Հարածները, քայքայուած, բնաջնջման քաղաքականութիւնը, թէ՛ շեղ և թէ՛ ուղղակի ճանապարհներով, շարունակուեց:

Բայց այդ ժողովուրդը բոլորովին մեռած, լճացած էր. լքումի այդ լոպէսների մէջ Հանդէս եկաւ նրա կենսունակ, երիտասարդ տարրը, և Հայաստանի ամէն կողմերը սկսուեցան ինքնապաշտպան և կրուտղ խմբեր կազմակերպուիլ՝ զէնքի ուժով խօսելու «թշնամու» դէմ: Տիրեց մի ընդհանուր ոգևորութիւն. ցնցուեց և՛ Կովկասի երիտասարդութիւնը. աչնտեղ էլ խմբեր կազմակերպուիլ սկսան: Բանաստեղծ, վիպասան, հրապարակապիւր ամէնքը մարտիրոսացած ժողովրդի աղէխարշ վիճակը երգելով, նկարագրելով միասին՝ նրան յորդորում էին դէպի ընդդիմադրութիւն, դէպի ազատութիւն:

Բայց ամէն ինչ դեռ տարտամ, անորոշ վիճակ ուներ, ամէն խումբ, ամէն կազմակերպութիւն կղզիացած, տեղական բնաւորութիւն էր կրում, առանց ընդհանրական որոշ ծրագրի, առանց միակերպ ուղղութեան և որոշ սկզբունքների:

Իրերի այդ խառն ժամանակին էր որ յառաջ եկաւ Հնչակեան Կուսակցութիւնը, նա՛ որին վիճակուեց լինել առաջին քաղաքական կուսակցութիւնը, այս բառի եւրոպական իմաստով, հայ ժողովրդի մէջ:

Հնչակեան Կուսակցութիւնը տիրող ընդհանուր և անկերպարան հոսանքի մէջ ամենից առաջ հրապարակապէս իր դիրքը, իր ուղղութիւնը որոշեց և գոյութիւն ունեցող կազմակերպութիւնները իրար հետ շաղկապելով՝ նրանց իր մէջը ձուլեց:

Նա միջազգային դաշնադրութիւնները պատմական ակտեր ընդունելով միասին, երբեք չզիջեց իր յոյսը զնեւ նրանց վրայ. Սան-Սթեֆանոյի, Բերլինի, Կիպրոսի դաշնադրութիւնները իրենց տարտամ և երկարացրի իմաստով չէ, որ պիտի գալին լուծել Հայկական Խնդիրը. — Յեղափոխութիւն, ապստամբութիւն, ահա՛ ընդհանուր միջոցը, որին պիտի կառչէր հայ ժողովուրդը և որին պիտի զիմէր իր վիճակին փոփոխութիւն ձեռք բերելու համար: Կռիւ, մարտ, արեան ճանապարհ — դա էր անյնեկիք անհրաժեշտ ուղին:

Բայց յեղափոխութիւն, ապստամբութիւն, զրոնք միջոցներ, ճանապարհներ են մի անտանելի իրականութիւն տապալելու, և ո՛չ թէ նպատակներ: Ի՞նչ պիտի լինէր, ուրեմն, հայ յեղափոխութեան նպատակը. — քանի որ տաճիկ բռնապետութիւնը ո՛չ միայն յառաջադիմութեան ոչ մի միջոց չէր տալիս հայ ժողո-

վրդին, այլ ակնյայտնի կերպով ջանք էր թափում նրան արմատախիլ անել, բնաջնջել, ուստի աշխատել իր բախտը բաժանել այդ բացարձակապետութիւնից և նրա տեղը հաստատել ժողովրդապետութիւն. — ժողովրդական միահեծանութեան փոխարէն: Անկախ Հայաստան՝ դա էր թուրք բնաջնջման քաղաքականութեան կտրուկ պատասխանը մեր կողմից:

Բայց մի ժողովրդի միահեծանական իրաւունքի տէր լինելը դեռ բացարձակ ապացոյց չէ, որ իրօք նա անկաշկանդ միահեծան է իր բոլոր արտաշայտութիւնների մէջ, քանի որ նրա ծոցի մէջ կան դասակարգեր ու դասակարգային կռիւ: Քաղաքական իսկական միահեծանութիւնը կախումն ունի տրնտեսական միահեծանութիւնից, առանց տնտեսական ապահովութեան չկայ քաղաքական իրաւունքի ապահովութիւն, ուրեմն, քաղաքական միահեծանութեան հետ տնտեսական միահեծանութիւն. իսկ դա կարող է լինել միայն այն ժամանակ, երբ արտադրութեան բոլոր միջոցները (հող, գործարան, մեքենայ, հանք, հաղորդակցութեան միջոցներ . . .) սեպհակաւորութիւն կլինեն արտադրողներին, այսինքն երբ անհատական սեպհակաւորութեանը կփոխարինէ հաւաքական, ընկերական սեպհակաւորութիւնը:

Դրած սկզբունքները սօցիալիստական էին, բոլորովին նոր հայ ժողովրդի համար. սակայն դա չխանգարեց, որ ամէն կարգի խոչնդոտների յաղթելով, Հնչակեան Կուսակցութիւնը առաջ չձգուէր և Հայկական Խնդրի ազդակը չհանդիսանար ու այդ Դատը մինչև 1896 թուականը մէն միևնակ իր ձեռքը չառնէր:

Այդ բոլորը վերաբերում են պատմութեանը:

Ամբողջ քսան տարի Հնչակեան Կուսակցութիւնը պայքարի դաշտն է արձանագել:

Քսա՛ն տարի, դա շատ կարճ ժամանակ չէ պայքարող մի կուսակցութեան համար: Այդ երկար ժամանակի մէջ Հնչակեան Կուսակցութիւնը շա՛տ փորձանքների, շա՛տ դժբախտութիւնների ենթարկուեց, բայց նա ամէն անգամ կարողացաւ դուռնաւ, մաքրւած դուռն գալ և իր ուղին շարունակել անսպառք:

Ու անհիմն չէ, որ հայ ժողովուրդը յոյսեր, շա՛տ թանկագին յոյսեր ունի դրած նրա վրայ: Եւ մեր կեանքի վսեմ նպատակը կլինի այդ յոյսերը արդարացնել — դա եղած է և կմնայ մեր կուսակցական յաւիտենական ուխտը:

Քսա՛ն տարի, Հնչակեան ընկեր, քանի՛ քանի՛ նահատակներ, մարտիրոսներ ենք ունեցել, քանի՛ քանի՛ ընկերներ կախաղանների վրայից, բանտերի խորքերից, արքայապետներից իրենց վերջին շունչը՝ արձակելիս հայեացքները դէպի ապագան ուղղած՝ իղձերը թողել են քեզ:

Այդ քսան տարուայ ընթացքում որքա՛ն դառնութեան, որքա՛ն ցնծութեան, ուրախութեան օրեր ենք ունեցել:

Եկաւ Նոր Տարին, կգայ շուտով և՛ Աշունը, ու ամէն կողմ ցրուած Հնչակեան մասնաճիւղերը և ընկերները մի առանձին հպարտութեամբ ու պարտաճանաչութեամբ է, որ պիտի տօնեն իրենց սիրելի Կուսակցութեան, իրենց գործունէութեան Քսանամեակը:

Այդ օրը ինքամփոփման, պարտաճանաչութեան տօն կլինի և՛ հայ ժողովրդի համար, — յուսալ այդ կարող ենք:

ՍՕՑԻԱԼԻԶՄ ԵՐ ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԽՆԴԻՐ

Ի՞նչ սկզբունքներով և ո՞ր ուղղությամբ առաջ պիտի տանել ծածկա-Հայկական Դատը, ուրիշ խօսքով՝ Հայկական Խնդիրը:

Խնդիրը նոր չէ՝ դրուած, երկար ժամանակներից ի վեր նա յուզուել է և Հէնց այդ պատճառով էլ ձեր ձեջ առաջ են եկել կուսակցութիւններ՝ ամէն ձեկը իր որոշ թէզերով:

Ո՛վ ի՞նչ է արել, խնդիրը դրա ծաւրն չէ, այլ այն՝ որ ծածկա-Հայկական Խնդիրը իր շուրջը չի հաւաքել մարքերի և կամքերի միապաղպղ գործունէութիւն. նրա լուծման մասին ձեր ձեջ երևան են եկել տարբեր մտածոնքներ, տարբեր ուղիներ:

Առաջնորդուել Համասմանեան Հիմունքներով, մի կողմ թողնել Հայկական Դատ, Հայկական Խնդիր անունը, ճանաչել օսմանեան պետութիւն և բոլոր պետութեան ձեջ, առանց ցեղի ու կրօնի խտրութեան, իրաւագործի, ճշունեւած ամբողջական մի ժողովուրդ, ու այդ մի ժողովրդի անունով և նրա շահերի համար կռիւ մղել օսմանեան բռնապետութեան դէմ, ապաւելել այն և առաջ բերել իրաւական մի պետութիւն, ուր ամէն ազգ, ամէն ժողովուրդ, անխտիր, վայելէր քաղաքական և տնտեսական այն բոլոր իրաւունքները, ինչոր ժողովրդի կամքից բխած մի պետութիւն կարող է տալ: Եւ այդ հեռւոր նպատակին հասնելու համար, ամէնից առաջ հայերը, որպէս զարգացած և յառաջադէմ տարր, մի կողմ պիտի թողնեն ուրոյն Դատի գոյութիւնը, չճանաչեն, բացառապէս իրենց անունով և իրենց օգտի համար, միջադրային այն բոլոր դաշնադրութիւնները և յանձնառութիւնները որամադրութիւնները, որոնք միջադրայնաբար յենակէտ են ծառայում օսմանեան պետութեան ձեջ Հայկական Դատ լինելուն և այդպիսով նրան միանգամայն անջատում են ուրիշ տարրերից:

Այդ թէզը որքան որ հիմն, բայց վերջերս մի առանձին կերպով յուզուած է, իրեն օժանդակիչ տարր նկատելով այն հանգամանքը, որ մինչև ցարդ եղած գործունէութեան ուղիները դրական և շօշափելի մի արդիւնքի չը հասցրին Հայկական Խնդիրը:

Այդ նկատմամբ ձեռք քանիցս աւելի ենք ունեցել մեր Հայեացքները յայտնել, որի ընդհանուր եզրակացութիւնն է, որ այդպիսի մի թէզ իրականացնելը միայն մեր՝ Հայերիս ոյժերից, մեր կամեցողութիւնից կախուծն չունի, ձեռք մի ծաւն ենք ամբողջութեան, հետևաբար ամբողջութիւնն է, որ միատեղ այդպիսի վախճանական եզրակացութեան պիտի յանգի. այդ նշանակաւոր պարս կան և՛ եւրոպական պետութիւնները, Արեւելեան Խնդրի ազդակ եղող պետութիւնները, նրանք էլ խօսք ունեն ասելիք այդ մասին, և որովհետեւ ձեռք կշիռ ունի այդ թէզի իրականացման համար նախ ինքը՝ հարցական նշան ներկայացնող տաճիկ մասսան, ուստի պատմական անցեալ ունեցող մի հայ կուսակցութիւն թեթևամտութիւն չի կարող գործել ամէն ինչ table rase անել և կանգնել ամէն սեռակ պատահականութեան ու ստուերների առաջ: Ժամանակը և գործունէութիւնը միայն պիտի գայ ցոյց տալու, թէ այդ թէզը հոյ ունենալ, իրականանալ կարող է Թիւրքիայի զարգացման ներկայ պայմանների ձեջ:

Մենք, մեր կողմից, ո՛չ միայն պատրաստ ենք ուղծուելու, այլև ամէն աջակցութիւն տալու այն բոլոր տարրերին, որոնք ընդհանուր նշանաբան կունենան օսմանեան բռնապետութեան կործանումը և ժողովրդական միահեծանութեան տիրապետութիւնը, երբ ամէն ազգ, ամէն ժողովուրդ կարող կլինի ինքն իր ղեկավարիչը, ինքն իր ոյժերի տրամադրող լինել, առանց միմիայն սպառնալու, առանց միմիայն միախառնուելու հանդիմանալու:

Հետևաբար՝ վերև դրուած թէզի պաշտպանները, եթէ իրենք ուզում են գործ անել, եթէ ցանկանում են ծածկապատանի ձեջ ամփոփուած, իրենց հասկացածի պէս, ժողովրդի բարօրութեանը համար յենակէտեր ստեղծել, նրանք ամենից առաջ պիտի գործեն թուրք, քիւրդ, չերքէզ, արաբ, աւշար տարրերի ձեջ:

Եւ որովհետեւ այդ թէզը, ձեզ համար, դեռ "բաց խնդիր" է, ուստի երկար կանգ առնել հարկ չլինելով՝ անցնենք միւսներին:

Երկար ժամանակից ի վեր մի ուրիշ թէզ էլ կայ մեր ձեջ, և այս կարգիւ-մտածող գործողները ասում են, որ ծածկա-Հայկական Դատը բացառապէս առաջ պիտի տանել զուտ ազգայնական ուղղութեամբ: Մեր Դատի հետ չպէտք է խառնել որ և է "սօցիալիզմ", "ընկերական" որ և է խնդիր. մեր Դատը "զուտ ազգայնական" մի Դատ է. նախ միանալ, ամէն ջանք թափել ձեզ ազատել թրքաւան լծից, և մի անգամ արդէն ազատ՝ բռնակալութեան ճիրաններից, այնուհետեւ միայն կարելի կլինի ընկերական այս ու այն ինքրի մասին խօսել, որոշումներ, վճիռներ արձակել: Իսկ մինչ այդ՝ հարկաւոր է "զուտ հայրենասիրութիւն" քարոզել, ուրիշ և ո՛չ մի զաղափար. եթէ սօցիալիզմ քարոզենք—փաստում են այդ կարգի դատողները—այն ժամանակ եւրոպական պետութիւնները ո՛չ միայն չեն միջամտիլ մեր Խնդրին, այլ արդեւք կհանդիմանան, որովհետեւ ձեռք ձեռք ենք Հայաստանի ձեջ հաստատել սօցիալիստական ընկերացւորների տիրապետութիւն, մինչդեռ նրանք՝ այդ պետութիւնները իրենք հակառակ են այդ սկզբունքներին իրենց երկրների ձեջ, ուրեմն նրանք չեն ցանկանայ ոյժ տալ, թոյլ տալ ձեզ, որ ձեռք մեր երկրի ձեջ իրականացնեն սօցիալիզմը, — իրենց արամազծօրէն հակառակ եղող սկզբունքների կիրառութիւնը: Ու բացի դրանից, ասում են մեր "զուտ ազգայնականները", "զուտ հայրենասիրականները", եթէ Հայկական Դատի հետ խառնելու լինենք որ և է տնտեսական, ընկերային խնդիր, նամանաւանդ սօցիալիստական զաղափարներ, այն ժամանակ հայ ժողովուրդը մի քանի դասակարգերի կը բաժնենք և այդպիսով նրանց չենք կարող համախմբել մեր Դատի շուրջը, — հարուստները, ունեւորները, վաճառականները, բէկերը ու աղաները իրենք առաջինը կլինեն այդ Դատից յետ կանգնողը և նրան ոյժ չտուողը, քանի որ ձեռք սօցիալիստական զաղափարներով կառաջնորդուինք. իսկ դա ուղղակի վնասակար է մեր Դատին, որովհետեւ առանց հարուստների օժանդակութեան, առանց վաճառականների օգնութեան ձեռք ոչինչ չենք կարող անել, քանի որ մնացած դասակարգերը աղքատ են, և պահանջած քանակութեամբ դրամական ոյժ չեն կարող գոյացնել: Ուրեմն, եզրակացնում են այդպիսիները, մի կողմ սօցիալիզմ, մի կողմ ընկերային և տնտեսական խնդիր, "զուտ ազգայնականութիւն", "զուտ հայրենասիրութիւն", "նամանաւանդ մեր երկրի"՝ Հայաստանի, ծածկապատանի ձեջ, ուր սօցիալիստական հոյ չկայ. կա՛ն այնպիսի գործարարներ, բարձր ծխնելոյցներ, միատեղ համախմբուած գործարարական աշխատատեղեր, պրոլետարներ,—ո՛չ, ուրեմն, այլևս սօցիալիզմի խօսք լինել չի կարող, բաւական է որ ձեռք թօթափենք թրքական լուծը, սղատուենք սուլթանական բռնապետութեան ճիրաններից և այնուհետեւ հայ ժողովուրդը, հայ զիւղացին ծանաւորապէս ազատ, բարեկեցիկ, կարող է ապրել իր երկրի, իր վաթանի ձեջ. — ահա՛ փաստերի շտեմարանը "զուտ հայրենասէրներ"ի, յաւելեալ "զուտ ազգայնականների":*)

Քննենք այդ թէզն էլ:

—Մինչև օրս ձեզ անկարելի եղաւ իմանալ թէ ծածկա-Հայկական Դատը այդ բնաւորութեամբ լուծել ուղղորդող ի՞նչ տարրակալով, ի՞նչ ուղղութեամբ, գործելակերպի ի՞նչ

*) Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը արդէն ձեռնարկել է մի շարք քննարկների հրատարակութեան՝ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՍՕՑԻԱԼԻԶՄԻ փոխադարձ յարաբերութիւնները որոշող:

եղանակներով են ուզում տալու և տաճկական բռնակալութիւնը և նրա տեղը հաստատել Հայկական մի Կառավարութիւն, որ մեզ պիտի հասցնէր ազատ, բարեկեցիկ, բախտաւոր վիճակի: Հակառակ իրենց արտադրած տարտամ խօսքերին, որ յաճախ երևան են եկել Հակառակորդին մի բան ասելու գիտեմքից, այդ ուղղութեամբ աշխատող կամ աշխատել ուղղուները մինչև յարկ անկարող եղան մի ծրագիր հրապարակ դնել, որ պէտքի իրենց "զուտ ազգայնական", "զուտ հայրենասիրական" սկզբունքների պատճառաբանութիւնից բխէր և՛ իրենց "զուտ ազգայնական", "զուտ հայրենասիրական" տաքտիկան: Լինել, կամ ձգտել լինել քաղաքական մի կուսակցութիւն առանց որոշ մի ծրագրի, առանց այդ ծրագիրը հրապարակ դնելու, բոլոր հետաքրքրուողների, հասարակական բոլոր խաւերի սեպհակալութիւնը դարձնելու — դա ուղղակի հեղուկութիւն է դեպի քաղաքական կուսակցութիւնների մտքի ըմբռնումը: Ասել որ ես ել կամ, ես ել քաղաքական կուսակցութիւն եմ, որ ես ել Հայկական Դատը լուծող ազգայններից մէկն եմ, առանց իր որոշ ծրագիրը ամէնքի առաջը դնելու, այն պատճառաբանութեամբ թէ Սուլթանը կիմանայ մեր լինջ ուղերը և նախապէս առաջը կառնի, ուստի ծրագիրը ծածուկ պիտի պահել և միայն մեզնից ետոդներին տալ "երկումից", մեր "անգամը" լինելուց յետոյ, — դա արդէն ցոյց է տալիս հայ Յեղափոխական Գործի ըմբռնման խաղաղութիւն և բացայայտ յայտարար նշան, որ այդ կարգի մտածողները սկզբունքների ուրոյն յենակէտեր չունենալով՝ ուզում են ամէն ինչ հիմնել կոմպրոմիսների և տեղին ու պարագային յարմարուող բաղկացութիւնների վրայ:

Բայց մի քաղաքական կուսակցութիւն, այս բառի իսկական նշանակութեամբ, այդպէս լինել չի կարող, նրա մտածմունքի բոլոր տարրերը նախապէս որոշ, գծուած, յայտնի պիտի լինեն: Անշուշտ ծածկա-Հայաստանում գործող կուսակցութիւնները հենց այն հանգամանքով, որ նրանք կանգնած են ոչ-լեզալ հողի վրայ, կունենան, և պիտի ունենան, ծածուկ պահելի քննիք, բայց դա չի վերաբերում դեկալարիւն սկզբունքներին և Հայկական Դատի բնաւորութեան հասկացողութեան տարրին, — կարելի է, առ առաւել, ծածուկ պահել կաղնակերպական, տաքտիկային և այլ տեխնիքական մասեր, և միայն այդքան, այն ել ո՛չ ամբողջովին:

Որքան որ մտքի անորոշութեան և դադափարների անկապակցութեան առաջ, այնուամենայնիւ այդ մասին մի քանի խօսք, առաջնորդուելով լոկ խնդրի պարզաբանութեան տեսակէտից:

"Եթէ սօցիալիզմ մտնի Հայկական Դատի մէջ, եւրոպական պետութիւնները չեն միջամտիլ": — Որքան որ այս առարկութիւնը լրջութեան որ և է հիմունք չունի, դարձեալ խօսենք: Սօցիալիստական դադափարների գոյութիւնը և ոչ-գոյութիւնը ո՛չ խոչնդոտ, ո՛չ արդելիք և ո՛չ ել ստիպողական հանգամանք կարող է համարուել նրանց միջամտութեանը կամ ոչ-միջամտութեանը: Միջամտել ուզող պետութիւնները գործ չունեն խնդրի այն մասի հետ թէ հայ ժողովուրդը՝ ազգային գոյութեան իրաւունք, ինքնավարութիւն և նոյն խի անկախութիւն ձեռք բերուց յետոյ՝ պիտի ձգտի հարստութիւն արտադրող միջոցները հաւաքակա՛ն, ընկերային սեպհականութիւն դարձնել, թէ՛ անհատական: Եթէ Ռուսիան, Գերմանիան, Աւստրո-Հունգարիան, Անգլիան չեն միջամտիլ մեր Դատին, որովհետև նրանք հակառակ են սօցիալիզմի կիրառութեանը իրենց երկրի մէջ, ապա, ղիալքտիքական այդ դատողութեամբ, նրանք մեղ հակառակ պիտի լինէին, եթէ փորձէինք մեր ծրագրի տարրերը անել և՛ պարզ դեմոկրատիքական սկզբունքների դրձադրութիւնը, աչքի առաջ ունենալով որ նրանք իրենց երկրների մէջ հակառակում են և՛ բացարձակ դեմոկրատիքական սկզբունքների հաստատութեանը: — Կո՛չ այդ թէպի մէջ լրջութիւն: Եթէ լրջութիւն ընդունենք, ապա պիտի մտածենք

Հայաստանի մէջ ինքնակարութիւն հաստատել, որպէսզի դա խրոչեցնող պատճառ չը դառնայ Ռուսիային, հասարակապետութիւն՝ Ֆրանսիային . . . Այդ արամաբանութեամբ ամէն մի պետութեան բարի կամքը և նրա միջամտական կամեղութիւնը գրաւելու համար, հարկաւոր է որ նրա մէջ եղած բէժիմն ել աշխատենք մեր ծրագրի տարրերը անել. այդ կերպով, ուրեմն, մենք 6-7-ը ծրագիր պիտի ունենանք, որ ամէն մէկին իր ճաշակին և արամադրութեան յարմար եկածը ներկայացնենք . . .

Եթէ մեր Ծրագրի սօցիալիստական լինելը արտաքին միջամտութեան համար խոչնդատ հանդիսացած լինէր, ապա նրանք չպիտի միջամտէին ո՛չ Սասունի 1894-ի և ո՛չ ել Զէյթունի ապստամբութեանը, որովհետև նրանք հնչական գործեր էին, իսկ հնչականները՝ սօցիալիստներ: Հնչական ծրագրի խրաքանչիւր կէտը, պաշտօնական մեկնաբանական չափազանցութիւններով միասին, յայտնի է եղել այն բոլոր պետութիւններին, որոնք միջամտեցին և կաղմեցին ու ստորագրեցին "Մայիս 11-ի Ծրագիրը". աւելացնենք և՛ այն, որ ուշի ուշով վերլուծողի աչքից չի կարող խուսափել և՛ այն կէտը, թէ ինչպէս Հնչական Ծրագրի որոշեալ արամադրութիւններն արդէն արձագանգ են գտել նոյն այդ "Ծրագրի" մէջ:

Եզրակացութիւն: — Պետութեանց միջամտութիւնը կամ ո՛չ-միջամտութիւնը՝ Հայկական Դատի համար՝ որ և է առնչութիւն չի կարող ունենալ մեր սօցիալիստ լինելուն կամ չլինելուն: Ուրեմն՝ սօցիալիստական մի ծրագիր այդ կողմից չէ, որ հակառակութեան պիտի հանդիպի:

"Եթէ մեր Դատի հետ սօցիալիզմ խառնենք, հարուստները, ունեւորները մեղ չեն օգնիլ": — Տեսնենք այս թէպի արժէքը: Հայ հարուստների Հայկական Խնդրին օգնել, չօգնելը, դարձեալ, ո՛չ մի կապակցութիւն չունի սօցիալիզմի մեր ծրագրի մէջ լինելուն կամ չլինելուն: Իրականութիւնը այն է, որ հայ հարուստը, հայ ունեւորը, հայ վաճառականը, պետական պաշտօնեան, բուրժուան հայ Դատի ազգայնի չեն եղած և չեն՝ սկզբից ի վեր: Եթէ սրանից 30-50 տարի առաջ հայ հարուստը, ո՛չ-զիւղացի, ուղղակի խտու չՀա-գործուող դասակարգը, նրանք՝ որոնք Թիւրքիայի մէջ յայտնի են որպէս աղա, էֆէնդի, բէկ, փաշա, վաճառական, ունեւոր . . . սրանք արթննային և Հայկական Դատ, Աղգային Խնդրի մէջ տեղ գլորէին, ինչպէս որ այդ ժամանակները արեցին իրենց համարժէք տարրերը՝ երբեմն օսմանեան պետութեան պատկառող ուրիշ երկրների մէջ, դա, գուցէ, մասամբ հասկանալի լինէր: Բայց այդ դասակարգը, իր բոլոր շերտաւորումներով միասին, չգործեց, պատմական թատերաբեմի վրան դուրս չեկաւ. նա բաւականացաւ օսմանեան բռնապետութեան իրեն տուած քաղաքական ու անտեսական պաշտաններով և գրեթէ անարտունջ շարունակեց իր ո՛չ-նախանձելի գոյութիւնը մինչև այսօր: Դեռ աւելին կայ, հայ հարուստը, երկելին ո՛չ միայն արդեամբ Հայկական Խնդրի ազգայն չէ, այլ նա, իր դասակարգային նեղ շահերի տեսակէտից, բոլորովին հակառակ էլ է այդ Դատին: Եւ այդ հասկանալի է. այդ դասակարգի մի խոշոր մասը, մի առանձին կոյր տգիտութեամբ, օսմանեան պետութեան ներկայ բէժիմն մէջն է տեսնում իր բարգաւաճումը, իր գործերի յաջողութիւնը. դուրի որ և է դադափարից և ձգտումից, նա ուզում է միայն դրամ շահել, դրամ վաստակել, իսկ մի քայքայուած, անարխիական ամեն տարօրինակութիւններ բովանդակող մի երկիր, կարծում է թէ, նրան այդ միջոցը լիւրի տալիս է: Կարգ ու կանոն ունեցող մի երկիր, ի հարկէ, նրան թոյլ չէր տալ իր առասպելական շահագործութիւնը անսանձ կերպով առաջ տանել: Բաւական է մի փաշայի, մի բէկի, մի գայմազաճի կաշառել մի քանի հարկւր սովով, որ նրա փոխարէն հաղարաւորները հանէր հայի զիւղացիներից: 30 զիւղ ունեցող Խօշմարեան-

ները շատ լաւ դիտեն, որ իրենք չեն կարող դերերէյինք լինել, և իրենց գիւղերի մէջ եղող հայերի հետ, — ինչպէս մասամբ և՛ թուրքերի, քուրդերի — վարուել որպէս պարզ սուրբունիներ, գերիներ։ — Հայ գիւղացիին հարստանք է անում, հարստանիքաւորները գովել են բռնել, "էֆէնդին" էլ է ճանաչուցում . . . և լաւ պարող աղջիկները, նորահարս կիները, երբ դժբախտութիւն ունեն "էֆէնդին" հաճելի լինել, նրան համբոյներ պիտի տան բոլորի առաջ . . . Թօսողը, դա փոյթ չէ, նրա "կաշին կարելի է քերթել"։ Թօշմարեալը և իր նմաններն են, կամ պիտի լինեն, Հայկական Դատը լուծողները։ Այն ինչոր Աւետիա Էֆէնդու տունն է անում Բիթլիկի և իր շրջականների մէջ, նրա դորձած չարքների մի քառորդը չէր գործել "Թալիբ Էֆէնդին", որը սակայն տեւուորի դաշոյնին արժանացաւ։ Բայց Թալիբ Էֆէնդին, այդ տիտղոսաւոր չարագործը, որ հային թշուառացները, նրան իր երկրից արձատահան անելը, նրան ամէն տեսակ դիւային հալածանքի ենթարկելը իր հաստատուն զաղափարն էր և իր կեանքի նպատակը, նա՛ այդ Թալիբ Էֆէնդին, իր արարքներով նսեմանում է Աւետիա Էֆէնդու գործերի առաջ։ Նոյնը, շատ քիչ բացառութեամբ, կարելի է ասել և՛ ուրիշ հայ հարուստների, հայ ուրիշ աղաների մասին։ Հայ երկրի մէջ թիւրք, քուրդ աւաղակը, հարստահարիչը այնքան չի զնտում, այն աղետները չի բերում հայ ժողովրդի գլխին, որքան քոյի տակ ծածկուած հայ տղրուկ աւաղակները։ Քանի՛ քանի՛ աւաղակներ տրամադրելի են այդ "հայ աղաներ" լին, և ինչեք չեն անում նրանք։ Դայճաղաճներին, փաշաներին առաջնորդները, նրանց ցուցում տուողները նոյնքան այդ համարին աւաղակներն են, որքան համանման ալլարիւնները։

Բայց մեր է այդ հարուստ, ունեւոր, բուրժուա դասակարգը, որ յանձն պիտի առնի աղղակ հանդիսանալ Հայկական Դատին։ Հայաստանի մէջ նա շատ քիչ է, եղածն էլ այնքան է հետաքրքրուած Հայկական Դատով, որքան որ իր նրժման շահակից մի թուրք, մի քուրդ, նրա համար Դատ, Խընդիր չկայ։ Բացառութիւնները այնքան քիչ են, որ այդ մասին խօսելն անգամ աւելորդ է. և արդէն քսոն տարուայ մեր յեղափոխական պատմութիւնը այնտեղ է ապացուցանելու համար, որ այդ դասակարգից, գրեթէ, և՛ ո՛չ մէկը գիտակցաբար Յեղափոխական Դործի ճանաչակցելով՝ բանտերի մէջ ճաշուեց կամ կախաղանների վրայից իր վերջին շունչը արձակեց։ Անդհակառակը, ո՛ր կողմը որ շրջես՝ կը տեսնես որ մասնիւնները, դաւաճանները, լրտեսները, ցուցադրողները համարեա բոլորն էլ այդ դասակարգի ճեւեղերն են զուրա եկել։

Ունենք հարուստ, ունեւոր, բուրժուա դասակարգ, արդարեւ, և թուով բաւականին շատ, բայց նրանք գտնուած են Պոլսում, Զմիւռնիայում, Փոքր-Ասիայի զանազան վաճառաշահ քաղաքներում, — տալ սրանց մեր պատմութեան մէջ այն դերը, ինչոր ուրիշ աղգերի մէջ եղող համանման տարրն է եղել, դա կլինէր ցնորք, իրականութիւնից դուրս մի զաւանջանք։ Չենք ժխտում, որ այդ տարրի միջից օգտակար եղածներ կան, և եղել են, բայց ա՛յնքան քիչ, ա՛յնքան վախկոտ, որ նրան մեր Խնդրի լծակ անելը պարզապէս այդ Խնդրը դիտմամբ սպանել տակ է։

Ունենք հարուստ, շատ հարուստ, խոշոր բուրժուա մի դասակարգ արտասահմանում՝ Պրանսիայում, Անգլիայում, Ամերիկայում . . . Բայց դրանց համար, իրօք, Հայկական Խընդիր գոյութիւն չունի, իսկ եթէ ունի, ապա որպէս միջոց մի փոքրիկ բարեգործութիւն, ողորմածութիւն անելու։ — "Մենք մեր ձեռքից եկած դրամական օգնութիւնը կանենք, բայց պէտք է համոզուած լինենք, որ ցոյց և շարժումներ չէք անիլ Պոլսում և այլ այն բոլոր վայրերում, ուր մենք մեր գործերը ունինք։ Յեղափոխական շարժումները մեր շահին զնտում են, մեր գործերի զարգացմանը և կանոնաւորութեանը արգելք

լինում ու մեղ կառավարութեան աչքից հանում, որի հետ մենք գործեր ունենք։ Եարժու էք ուզում անել, ա՛յ, կարող էք անել Անատոլիայի խորքերում (այսինքն Հայաստանում), ուր մենք գործ, կապ չունենք. այդ տեղերը ինչ կուզէք՝ արեք և երբ մենք համոզուինք, որ միայն այդ տեղերը պիտի անէք, այն ժամանակ մեր ձեռքէն եկածը կանենք, որ այն տեղերի խեղճ հայերին մի բան լինի", — աս մէկի տրամաբանութիւնն էր մեղ գէճ համար։ "Ես ընդարձակ կօմիսիօներական կապեր ունեմ Անատոլիայի քաղաքների հետ, Պոլսի ի՛նչ կուզէք՝ արե՛ք, բայց ո՛չ իմ գործ ունեցած քաղաքներում, երբ համոզուինք որ մեղ կլէք, ու մեր ասածին պէս կանէք, դրամ կտանք, ինչո՛ւ չէ" . . . աս էլ մի ուրիշ փաստաբանութիւնն էր։ "Խնձ ինչ քո Մշտյ դաշտերը, ա՛խպէր, արատութիւն այնտեղ եղա՛ւ, չեղա՛ւ, ինչի՛ս պէտք . . . " ասում էր պաղարկւածութեամբ մի ուրիշը . . .

Եւ սրա՛նք են, ա՛յս տարրերն են, որ Հայկական Դատի լծակը պիտի լինեն։ Պոլսոյ և Թիւրքիայի եղբարքաղաքների մէջ հաստատուած հարուստ տարրերը թուրք կառավարութեան գէճ ըմբոստանալու միտք անգամ չեն տաճում։ Իսկ արտասահմանի բուրժուա հայ տարրի համար Հայկական Խնդիրը միայն այնքան գոյութիւն ունի, որքան մի "աստուածավախ քրիստոնեայ եւրոպացու", որ կարեկցում է "հայ քրիստոնեային" և նրան, հարկաւորուած դէպքում, ուղարկում է իր լուծան։ Պրանսիայի, Անգլիայի, Միացեալ Նահանգների . . . զաւակները արեւն են թափել և իրենց երկրները, համեմատական, քաղաքական ազատ պայմանների մէջ զրել հայ բուրժուայի, հայ վաճառականի, հայ ունեւորի համար. այդ երկրների դուները լայնօրէն բաց են, նա այն տեղերը կարող է նստել և վայելել ուրիշի աշխատանքի պտուղը, ինչպէս որ նոյնը անում է ծաճկաստանի այն վայրերում, ուր "իր գործերն" են հաստատուած։

Հարց, ա՛յս տարրերի համար է, որ Թիւրքիայում գործող քաղաքական մի կուսակցութիւն իր ճրագրի մէջ սոցիալիզմ չպիտի դնի, որպէսզի մեր Դատին չվնասի։

Նախ որ այդ տարրը, իր բոլոր շերտաւորումներով, Հայկական Դատի իրական աղղակը եղող տարրի մի չնչին տուկոն է կաղմում, և երկրորդ՝ նա ինքը գործ չի ստեղծել, Յեղափոխական Դործի ճանրութիւնը չի տարել, և չի էլ ուզում տանել, որպէսզի նրա դիւրագոյացութեանը որ և է կշիռ տրուի, եթէ այդպիսի մի պատեհականութիւն ներելի է քաղաքական մի կուսակցութեան համար։

Պրանսիական, գերմանական, իտալական . . . բուրժուական յեղափոխութիւնների իրական աղղակը այդ երկրների բուրժուազիան լինելով՝ ժամանակի ո՛չ-բուրժուա, աշխատաւոր դասակարգը նրան ոյժ տուեց, օգնեց բուրժուազիական ազատութիւններ ձեռք բերելու համար. և ո՛չ-բուրժուա դասակարգերը այդ արեցին, այլ կերպ էլ չէր կարող լինել, պարզապէս իրենց շահի առնակէտից։ Պատմական զարգացման ներկայ շրջանում, երբ քաղաքական, ընկերական աւճեալաբար խնդիրները իր պատմական միտքին է արել պլանութեամբ արկաւոր, օրինակ Ռուսիայում, այդպիսի երկրներում բուրժուազիան մի որոշ չափով համընթաց է պրոլետարիատին և նրա հետ առաջ է մղում զարձեալ իր շահի տեսակէտից։ Եւ եթէ հայ բուրժուա, հարուստ, ունեւոր, վաճառական դասակարգերը Հայկական Խնդրին ոյժ տան, դա պիտի լինի իրենց անմիջական շահերի տեսակէտից, ուրիշ և ո՛չ մի պատճառով, նրանք՝ որոնք այդ հասկանում են, ահա՛ այդ մասն էլ, շատ ու քիչ, օգնում, օժանդակում, գործում է. ուրեմն աշտեղ սոցիալիզմի մեղադրանքի խօսք չի կարող լինել։ Ու, կարծում ենք, որ Հայկական Խնդրում ո՛չ-սոցիալիստական սկզբունքներով առաջնորդող տարրերը մեղանից աւելի յաջողութիւն չգտան կամ մեղանից մեծ թուով "համակըրող", "օժանդակող", հարուստներ չունեցան . . .

Անցնենք "զուտ ազգայնական", "զուտ հայրենասիրական" տեսակետին:

Հայկական Դատը "զուտ ազգայնական", "զուտ հայրենասիրական" սկզբունքներով պետք է առաջ տանել մոտաժողները, անշուշտ, գիտակցի պիտի լինէին և ընդունէին այդ սկզբունքներից բխած բոլոր հետևությունները: — Լինել "զուտ ազգայնական", "զուտ հայրենասեր", ինչպէս որ այդ գաղափարը հասկացուել է ժամանակի ընթացքում, և ինչպէս որ հասկանում են այժմ ամէն երկրներում, դա կնշանակի ընկերութեան ծոցի մէջ, ուրեմն և հայկական, ընդունել մի դասակարգի տիրապետութեան յաւիտենական անհրաժեշտութիւնը միւսի վրայ, որպէս ընկերային մի օրէնք. դա կնշանակի կանգնել զուտ պատմական իրաւունքի վրայ և Հայաստանի մէջ եղող եկտր տարրերին, մեր յաջողութեան և ազատագրութեան օրերում, դիմել նուաճողի վիճակի մէջ, որպիսի զրուծին ունենք մենք այժմ: "Չուտ ազգայնականներ" տեսութեամբ վաղուան ազատագրութեան Հայաստանի մէջ իսկ հայ գիւղացին, հայ սեպհականազուրկը, գրեթէ, դարձեալ պիտի շարունակի ունենալ տնտեսական, նիւթական այն ստորադասաւ վիճակը, որ ունի այժմ, տարբերութեամբ միայն նրան որ՝ առ առաւել, Ալիի տեղը կգայ Ակօն, — որովհետեւ իրենց հասկացած և պաշտպանած ընկերային կարգերը մէկ դասակարգի տիրապետութիւնը միւսի վրայ բնական օրէնք և իրաւունք են համարում:

Եթէ մի գաղափար կայ, որ ամենամեծ վտանգն է սպառնում ծաճկա-հայ Դատին, — այդ "զուտ ազգայնական", "նացիոնալիստական" գաղափարներով առաջնորդւելն է: Ոչինչ այնքան շփոթիչ և անտարբերութիւններ, ու նոյն իսկ թըշնամութիւններ չի յարուցանիլ, որքան բարձրօրէն վնասակար այդ մտքի կիրառութեան ամենաթեթեւ ձգտումն անգամ: Նախ ո՛չ մի ինտելիգենտ մարդ իրեն թոյլ չի տալ, եթէ նա վերջին աստիճանի թթու նացիոնալիստ և խաւարածիտ չէ, եթէ դասակարգային մասնաւոր շահեր և հակումներ չունի, — մտնել քաղաքական մի կուսակցութեան մէջ, ոյժ տալ մի Դատի, որ իրեն հիմունք կունենայ մարմնացած անարդարութիւնը: Երկրորդ՝ սեպհականազուրկ հայ գիւղացին, մարաբան, գիւղական պրոլետարը ի՞նչ մի դրդապատճառ պիտի ունենան ազգակ հանդիսանալ մի Դատի, որ իրենց բաւազրն ոչինչ ունի բերելիք, բացի լծից, որ ունին արդէն, անուան տարբերութիւնը նշանակութիւն չունի այդտեղ: Նրանք՝ որոնք այսօր մատը մատին չեն դարձնում Հայկական Դատի համար, այդ տարրերը վաղը նոյն խօսքը և հրամանը պիտի ունենան ասելիք հայ աշխատաւոր տարրին, ինչոր այսօր ասում է թուրք, քիւրդ . . . տիրապետողը, և միայն այն պատճառաբանութեամբ, որ մէկը ունի, իսկ միւսը՝ ոչ: "Եթէ մեր վիճակը մի փոքր թեթեւանայ Հայաստանի մէջ, եթէ թուրք բռնութիւնները մի փոքր դադարին, մենք ամենից հանգիստ, ապահովը կապրինք մեր երկրին մէջ" — յաճախ ասում է "զուտ ազգայնականների" կողմից: Եւ ոչինչ, բացարձակապէս ոչինչ պատրալից չէ, քան այդ մտածոնքը, մտածոնք որ իր բոլոր կողմերով հակասում է իրականութեանը: Մենք ասելին կասենք. ո՛չ միայն սուլթանական բռնութիւնը, այլ նոյն իսկ եթէ ամենալայն հիմունքներով հասարակապետութիւն հաստատուի այսօր Թիւրքիայի մէջ, դարձեալ հայ աշխատաւորները (գիւղացի, մարաբա, գիւղական պրոլետար, մանր արտադրողներ և բանւորներ) վիճակը արմատապէս չի փոխուիլ, չի փոխուիլ պարզապէս նրա համար, որ նրանք "արտադրութեան միջոցներից արդէն զուրկ են: Ու ասելի քան սիւալ կլինէր, իրականութեան հակառակ, անուրջների մէջ ընկնել, մի ժողովրդի մղել արեան դաշտի մէջ՝ առանց նրան պարզ գաղափար տալու իր վիճակի մասին, առանց նրան ասելու որ ի՞նչն է խոչնդոտը իր բարօրութեանը և ի՞նչն է որ իրեն բարօրութիւն պիտի բերի, —

այդ բոլորը ի հարկէ այնքան, որքան որ դա կախումն ունի կուսակցական դեկադարիչ սկզբունքներից: Այս էլ ասենք, որ դեռ կուսակցական գոյութիւնը մի Դատ ուղիղ հակահարու յայտարար նշան չէ, և ոչ էլ ասելի կամ պակաս թուով հետևողներ ունենալը:

Կենդանի օրինակը աչքներին առաջը ունենք: Լեհացիները երեք անգամ փորձեցին "զուտ ազգայնական", "զուտ հայրենասիրական" ուղղութեամբ, ապստամբութեան միջոցով, անկախութիւն ձեռք բերել, ցարական լուծը թօթալիլ, բայց նրանք և ո՛չ մի յաջողութիւն գտան, թէև իրենց աղնուականների թիւը և ազդեցութիւնը ահագին էր, ինչպէս և բուրժուաներինը: Լեհ գիւղացին, լեհ աշխատաւորը միանար իր արիւնակից աղնուականների և բուրժուաների հետ, զուտ վտարէր ռուս և այլ եկտր աղնուականներին ու բարձունքներին և նրանց տեղը վերահաստատէր իր շլետախոնքին՝ ի՞նչու համար, — որպէսզի իրեն ստրկացնող ռուսի փոխարէն դարձնէր ստրկացնող լեհը . . . Երկար փորձերից յետոյ, վերջապէս, ժողովրդի իրական վիճակը հասկացող տարրերը, սօցիալիստները, այդ ժողովրդի վիճակին դարձան տանելը, թէ քաղաքականապէս և թէ տնտեսապէս, տեսան սօցիալիզմի մէջ, ու սօցիալիզմը եղաւ նրանց առաջնորդողը, նրանց փարոսը. և եթէ այսօրուայ լեհ ժողովրդի վիճակը, քաղաքականապէս, առաջուայ ծայրահեղ խստութիւնները չունի, և եթէ մի օր լեհ ժողովուրդը իրաւունք պիտի ունենայ տեսնել իր սեպհական ինքնավարութիւնը և իր բախտի տէրը լինել — դա պիտի լինի միայն և միայն սօցիալիստ կուսակցութիւնների գործունէութեան շնորհիւ: Լեհ գործաւորը, լեհ գիւղացին կարող է հասկանալ մի սօցիալիստ սկզբունք՝ "արտադրութեան միջոցները արտադրողին սեպհականացնել", ու իր ամբողջ ոյժը կտայ այդ սկզբունքը իրականութեան մէջ կիրարկուած տեսնելու, բայց նա չի կարող ըմբռնել շլետախոնք (լեհ աղնուական) ասածը. "Արի արիւնդ թափիր, իմ հակառակորդ ռուս և այլ տարրերին հայրենասիրաբար արտաքսիր, ու այնուհետեւ ինքդ ազգասիրաբար շարունակիր ունենալ այն դրութիւնը, ինչոր ունես, որովհետեւ կաշիդ քերթողը ես պիտի լինեմ, քո արիւնակիցը և ո՛չ թէ օտարը . . .":

"Չուտ ազգայնական", "զուտ հայրենասիրական" սկզբունքներով չէ, որ Հայկական Դատը առաջ մղել կարելի է, գործեն ինչքան որ կուզեն, անեն՝ ինչոր կուզեն, այդ ուղղութեամբ ամէն փորձ ապարդիւն պիտի անցնի, ամէն արարք անյաջողութեան պիտի դատապարտուի:

Սօցիալիզմ, — ահա՛ շարժիչ և առաջ մղող ազդակը Հայկական Դատին. սօցիալիստական սկզբունքներից դուրս ամէն ինչ մեղ կտանի դէպի խաւար, դէպի անստուգելիւն դէպի պատրանք, դէպի զաւանցանք, դէպի բանդաբաշտանք, դէպի մի անհամապատասխան իրականութիւն:

Բայց կա՛յ սօցիալիստական հող ծաճկաստանում ընդհանրապէս, ծաճկա-հայաստանում մասնաւորապէս: Ո՛ւր են գործարանները, ո՛ւր են բարձր ծխնեղջյուները, ո՛ւր գործաւոր բանւորները՝ պրոլետարները: — Այո՛, դրանք բոլորն էլ կան. և հէնց դրա համար էլ մեր թէգն է, որ միմիայն սօցիալիստական սկզբունքներով կարելի է առաջ մղել ծաճկա-հայ ազատագրութեան գործը:

Ուրեմն, մեր եղբակցութիւնն է, եթէ կայ քաղաքական մի կուսակցութիւն, որ իրական ազդակը կարող է լինել Հայկական Դատի, եթէ կայ մի կուսակցութիւն, որ շօշափելի հողի վրայ է կանգնում և ուղղակի արտայայտիչը հանդիսանում հայ ժողովրդի, — դա սօցիալիստ կուսակցութիւնն է, կուսակցութիւն՝ որ սօցիալիստական ծրագիր ունի և ո՛չ թէ "զուտ ազգայնական", "զուտ հայրենասիրական" կամ այլ թնջուկներով շաղկապուած:

Հայկական Դատի Հետ սօցիալիզմի կապ ունենալու կամ չունենալու, ծածկա-Հայաստանի մէջ սօցիալիստական սկզբունքների հոդ լինելու կամ չլինելու մասին վերջնական խօսք ասելուց առաջ՝ պէտք է աչքի առաջ ունենալ, քննադատել անհեղինակ իրականութիւնը՝ երկրի տնտեսական պայ-
մանները:

Ընդհանուր պատկերը այն է, որ ծածկա-Հայաստանում, ուրեմն և՛ Հայաստանում, տնտեսական զարգացման ամէն աստիճաններ, յայտնի չափով, կողք կողքի կանգնած մնում են: Այնտեղ դեռ կարելի է գտնել արտադրող և սպառող ճիւղերն անձի մէջ մարմնացած, հարստութիւնների, ապրանքների փոխանակու-
թեան սխառեմը դեռ սովորական է. ոչխար, ձի, եղ . . . իրարու հետ փոխանակելով՝ երկու կողմերի փոխադարձ պէտ-
քերին բաւականութիւն տալ, անասնաբուծների և երկրագործ-
ների փոխանակութեան եղանակով (troc système) գործ կատարելը՝ աւօրեայ յարաբերութիւններ են: Յեղա-
շին կեանքի կողքին կայ ֆեոդալականութիւնը (աւտոա-
կանութիւն) իր բոլոր բնորոշիչ կողմերով, կայ և՛ փոքր ար-
տադրող, մանր սեպհականատէր խոշոր կալուածատէրերի
կողքին: Ատանայի կալուածատէրերի (ոմանք հայ) ընդար-
ձակ կալուածները ոչնչով չեն տարբերում եւրոպական ի-
րենց համապատասխան ընկերներից, — վերջապէս ո՛ր նմոյշը որ ու-
զեա, կարող ես գտնել: Դրա հետ միասին կան ահագին
թուով սեպհականագուրկ դասակարգեր, ամէն կողմ յրուած.
— մանր հողատէրերի թիւը նախ քիչ է, երկրորդ ո՛չ
մի մանր հողատէր կարող է ապրել իր ունեցածի արդիւն-
քովը միայն, այնքան որ քիչ է իր ունեցած հողային սեպ-
հականութիւնը: Ընդհակառակը՝ ահագին չափերի է հասնում
նրանց թիւը, որոնք մի կտոր հող անգամ չունեն, այդպիսի-
սիւները կամ վարում, ցանում են ուրիշների հողերը և դառ-
նում են հողատէրերի՝ «մարդը» կամ իրենց գոյութիւնը պա-
հում են որպէս մ ար ա բ ա ն ե Ր (métayer): Մարաբա-
ների երկու տեսակն էլ կայ Հայաստանում, — նրանք՝ որոնք
ունեն իրենց երկրագործական անասունները և հողատէրի
հողերը վարում, ցանում, հնձում, կալում և սպա արտադր-
ւոյթը կիսում. ու նրանք՝ որոնք բացի աշխատող ձեռքերից
ոչինչ, բացարձակապէս ոչինչ չունեն, և այդպիսիները բը-
նական էն այս և այն հողատէրերի նշանակած բնակարանի մէջ,
իրենց բոլոր ընտանիքով՝ ու իրենց տրուած հողերը վարում,
ցանում, հնձում, կալում, և արտադրոյթի ո՛չ թէ կէսը, այլ
միայն մի մասը ստանում, մի մաս՝ որ նրան ճորտական զը-
րութիւնից բարձր վիճակի մէջ չի դնում: Հայաստանի մա-
րաբայական դրութիւնը բոլորովին նոյնութիւն չի կազմում ո՛չ
Փրանսիական և ո՛չ էլ իտալական մարաբաների հետ: Մեր երկրի
մարաբանները ո՛չ միայն աւելի շատ են շահագործւում, աւելի
շատ են կողոպտւում, այլ նրանք ո՛չ պաշտօնական ճորտեր
են, զրկուած իրենց ամենամանհրաժեշտ պիտոյքներից, և ա-
ռանց որ և է իրաւունքի, առանց որ և է հակակշիռի, որ նը-
րան տրուած լինէր պետութեան հաստատութիւնների կողմից:
Հայկական նահանգների մէջ մարաբայութիւնը ահագին չա-
փերի է հասնում, իսկ Բալահովիտ և Ձձկաձագ նա, հա-
մարեայ թէ, ամբողջութիւն է կազմում:

Ենթադրեմք, մի րոպէ, վերցուած սուլթանական բէթիմը, հայ
գիւղացին լինելով է որ պիտի ապրի և իր գոյութիւնը պահի.
— հողերը բւնում, սեպհականացում են բէկերի, աղաների,
ցեղապետների, մեծ կալուածատէրերի և պետական պաշ-
տօնեաների կողմից, պարզ է որ քաղաքական բէթիմի փո-
փոխութիւնը միայն դեռ հերքէ չէ, անդին կայ արձատր՝
տնտեսականը. քաղաքականը վարագործող արտաքին վա-
հանն է տնտեսական դրութեան: Կա՛յ մի տարբերութիւն
Հայաստանի հայ գիւղացիների և իտալական, ֆրանսիական
ու այլ երկրների գիւղացիների՝ միջև, երկրների՝ որոնց երկ-

րագործ դասը տալիս է սօցիալիզմի բանակի տարրերից մէկը:
Եւրոպական մտքով հասկացած՝ երկրագործական պրոլետարը
աւելի մեծ թիւ է կազմում Հայաստանում և աւելի վատթար
վիճակ ունի, քան ուրիշ երկրներում:

Եւ երբ Հայկական Դատի իսկական ազգայնը, և թուի կող-
մից տիրապետողը, այդ տարրն է կազմում, նա՛ որ մինչև հիմա
իր արեւն է թափել, նա՛ որ հազարներով կոտորուեց և
դեռ անվճար կանգնած է արեան դաշտի մէջը, այդ դասա-
կարգը որ յեղափոխական է դարձած, որովհետեւ բացի յեղա-
փոխութիւնից ուրիշ հնարաւորութիւն չունի իր վիճակը փո-
խելու, այդ դասակարգը, ահա՛, իր նշանաբանը, իր գեկալա-
րիչ սկզբունքը կարող է անել «արտադրութեան միջոցների
սեպհականութիւնը արտադրողներին» — որ սօցիալիստական
սկզբունքների մի անկիւնաքարն է: Մեր մէջ դեռ դասակարգեր,
դասակարգային խտրականութիւններ չկան. — ո՛վ ասաց որ չկայ,
նա կայ, թէ և ո՛չ այնքան սուր և կարկառուն կերպով, որքան ու-
րիշ երկրներում: Նուաճուած մեր դրութիւնը եթէ դասակարգային
այդ կռիւն ծածկում է մեր աչքերից, դա դեռ բաւական չէ ա-
սել, որ չկայ, նրա գոյութիւնը իմանալու, շօշափելու համար
միայն աւելի ձօտիկից պիտի ճանաչել իրականութիւնը, ա-
ւելի ծանրապնդել պիտի քննել իրերի փոխադարձ յարաբե-
րութիւնը: Եթէ հայ գեղջուկի ընտանեկան նահապետական
դրութիւնը շատ տեղերում դեռ պահուած է, դա դեռ յայ-
տարար նշան չէ, որ տնտեսական արտադրող ոյժերի սեպ-
հականացումն էլ բոլորովին այդ շրջանի մէջն է:

Առնենք հայ արհեստաւորը, որի թիւը նոյնքան մեծ է,
որքան հայ երկրագործին: Հայ արհեստաւորը, այդ մանր
արտադրողը, դեռ իր արտադրութեան գործիքների տէրն է,
բացի կարողանում է ապրել նա: Մենք այստեղ բոլորովին
մի կողմ ենք թողնում կեանքի և քոյքի, շուկաների և տե-
ղափոխութեան միջոցների ապահովութեան խնդիրը, եթէ այդ
բոլոր պայմանները լինէին, դարձեալ հայ արհեստաւորը, հայ
մանր արտադրողը չի կարող ապրել, և հետեւեալ ո՛չ մի-
այն նա պրոլետարանում է, այլ արդէն պրոլետարացած է,
այս բառի իսկական նշանակութեամբ:

Ձուլհակագործները, որպէս մանր արտադրողներ, ահագին մի
թիւ են կազմում, նոյնը և ներկարարները, ինչպէս և տպածոյ
պատրաստողները, մանուսալները . . . սրանից 25 տարի
առաջ Բիթլիկի մէջ եղող հայ աշխատաւորների համարեա մեծ
մասը այդ արհեստներով էին ապրում, և բաւականին լաւ ապրում:
Բիթլիկի՝ շիւրա՛ն իր գոյքը ունէր և ահագին չափերի էր հասնում
նրա սպառումը: Իսկ ա՛յժմ, — այսօր արտադրութեան այդ
ճիւղերով պարագողները բոլորը, համարեա բոլորը քայքայ-
ւած, կիսանթի, պարտքերի տակ խրուած, կա՛մ ուրիշ երկիր
են պանդխտած և կա՛մ ամենաջգաւոր, ծառայական դրութիւն
ունեն, սրանւորան աշխատելով: Նոյնը կարելի է ասել և՛
կոշիկակարների, դերձակների, կտաւագործների . . . համար:
Եւ մի՞թէ այդ բոլորը միայն հետեւանք են թրքական բարբարոսու-
թիւններէ, ու եթէ թրքական բարբարոսութիւնն էր չլինէին,
մի՞թէ այդ այդպէս չպիտի լինէր, — դրութիւնը որ այսօր հայ
արհեստաւորը, մանր արտադրողը ունի, այդ դրութիւնը նա
կունենար, եթէ նոյն իսկ ամենալայն հասարակապետութեան
մէջ գտնուած լինէր, փոխանակ թրքական բարբարոսութեան:

Եւ ինչո՞ւ. — կապիտալիզմի, խոշոր արտադրութեան տի-
րապետութեամբ: Կապիտալիզմ և խոշոր արտադրութիւն՝
սրանք, առաջին հայեացքից, անկարելիութիւններ են համարուած
Թիւրքիայի համար: Թիւրքիայի մէջ դեռ կապիտալիզմը, խո-
շոր արտադրութիւնը ոտք չի կոխել, նա դեռ ֆեոդալական
դրութիւն ունի՝ այս է ընթացիկ կարծիքը:

Մեր համոզումը բոլորովին այլ է, և մեր թէգն է, որ Թիւր-
քիան այնքան մի կապիտալիստական երկիր է, որքան Ռու-
սաստանը, որքան կապիտալիստական մի ուրիշ երկիր. տար-

բերութիւնը ծիայն նրանումն է, որ ուրիշ երկրների կապիտալիստական արտադրութեան կեղծոնաբանութիւնները և պաշտօնները գտնուում են Հէնց այդ երկրներում, իսկ թիւրքիայինը, Հայաստանինը գտնուում են Մանչեստրում, Լոնդոնում, Համբուրգում, Բեռլինում, և այլն: Ի՛նչ է անում կապիտալիզմի տիրապետութիւնը եւրոպական կապիտալիստական երկրներում,—նրա ուղանում է փոքր արհեստավարին, մանր հողատէրերին, յառաջ է բերում ժողովրդային զանգուածի պրոլետարացումն, ստեղծում է անգործների բանակ և անհրաժեշտ պիտանքներից զուրկի դէմ դնում միլիոնատէրեր՝ զրկումաների յաւելեալ արժեքից վիզւած: Թիւրքիայի եղակի դրութիւնն է, որ նրան կապիտալիստական շահագործման մի այդպիսի շուկայ են արել: Եւրոպական արտադրութիւնը, ամէն տեսակի, աւելի արժան կարելի է գնել Թիւրքիայում, քան այն երկրում, որտեղից որ այդ արտադրութիւնը ծագում է առեւ. դեռ մի տարբերութիւն կայ, այն՝ որ եւրոպական կապիտալիստական երկրների մանր արտադրողները պաշտպանուած են մաքսային տուրքերով, իսկ Թիւրքիայինը դրանից էլ զուրկ է: Երևան, Նախիջևան, Շուշի, Գանձակ առաջին Հայեացքից կապիտալիստական շրջաններ չեն, որովհետեւ այդ կողմերում գործարաններ և խոշոր արտադրութիւններ չկան, բայց այդ երևոյթը դեռ հերքելի է ասելու, որ այդ շրջանները կապիտալիստական շահագործմանը և ազդեցութեանը չեն ենթարկուած, քանի որ նրանց Հնոցները գտնուում են Թիֆլիզ, Բաքու, Մոսկուա, և այլն . . .

Թիւրքիայի կապիտալիստական Հնոցները գտնուում են Թիւրքիայից դուրս, բայց դա արգելք չէ, և ոչ էլ պատճառ, որպէսզի կապիտալիզմը այնտեղ իր ազդեցութիւնը չունենայ և չյառաջացնի իր հետեւանքները. որքան էլ վարագործուած, որքան էլ սքոդուած, բայց մենք այդ տեսնում ենք, որովհետեւ նրա հետեւանքը մեր կաշիի վրան կրում ենք անմիջապէս:

Խնդիրը այն չէ, որ կապիտալիզմը իր իրաւունքի և փթթումի մէջը չէ բուն Թիւրքիայում, այլ գտնուում է Թիւրքիայից դուրս, խնդիրն այն է, որ պատմական Հանգամանքները, Արեւելեան Խնդրի ստեղծած պետութեանց յարաբերութիւնները ամբողջ Թիւրքիան արել են կապիտալիստական Եւրոպայի մի մասը, մի շարունակութիւնը, նրա յաւելուածական մի կտորը:

Պատմական մի դժբախտութիւն է մեզ Համար, և մեր ստանձնած Գործին ծանրութիւն, որ մեր Համերկրացի աշխատողները դեռ գտնուում են մտային զարգացման այն վիճակի մէջ, որ նրանցից մի Հայ կաղծակերպութիւն չի կարող կազմել ո՛չ առանձին մարտնչողներ, որպէս շահագործուող դասակարգ, և ոչ էլ կարող է իր շարքերի մէջը առնել, զանազան կաղծակերպական բարդութիւններից և անյարմարութիւններից խուսափելու համար, բայց այդ Հանգամանքը չի խանգարում, որ մենք չառաջնորդուենք սոցիալիստական սկզբունքներով:

Կայ թուրք տիրապետող տարր, որ իր ամբողջ կաղծով ծանրացել է Հայ գիւղացու, արհեստավարի, մարաբայի, աշխատավորի, սեպհականաւորի վրան:

Գոյութիւն ունեցող քաղաքական օրէնքները, քաղաքական Հաստատութիւնները և գործադրական իշխանութիւնները լոկ նրա համար են, որ մեզ պահեն տնտեսական և քաղաքական այն պայմանների մէջ, ուր որ ենք — դա մեր ուսերի վրայ զրամ բեռան վերելի շերտն է, որ իր ծանրութեանը համար աւելի նկատելի է. բայց նրա տակը կայ և՛ միւս այն տարրերի բեռը, որոնք ա ղ է՛ն իւրացրել, սեպհականացրել են արտադրութեան միջոցները. բեռան երրորդ շերտը՝ դա կապիտալիզմն է, եւրոպական, միջազգային կապիտալիզմը, որի արմատը ուրիշ երկրներում լինելով միասին, իր ծծունէրը տարածել է և՛ մեր երկրում, մեր մարմնի վրայ: Թէ՛ս առաջին և թէ՛ երկրորդ շերտաւորումի մէջ կան հոծ թիւ հայերի, որոնք թէ՛ և մեր արխիւից, մեր ոսկրից, բայց դա արգելք չէ, որ իրենց դասակարգային շահի տեսակետից, նրանք միացած չլինեն օտարազգի երկու շերտաւորումների հետ՝ — Հայ փաշաները, էֆէնդիները, զայմագաները և այլ

պետական բարձր ամէն ատոմանաւորները, ինչպէս և Հայ աղաները, կարւաւատները, ոչնչով չեն տարբերւում իրենց նման օտարազգիներից, օրինակ թուրքերից, քիւրդերից, երբ խնդիրը գալիս է մեր կաշիի քերթելու, երբ հարցը դրւում է Հայ գիւղացուն, Հայ աշխատավորին, Հայ սեպհականաւորին շահագործելու և նրանից իր դասակարգային արտադրելի գործիքները ստեղծելու. որքան որ դասակարգային խտրականութիւնը խճճուած, ոչ-լիակատար զարգացման փթթումի մէջ և այդ պատճառով էլ անխուզարիտ աչքերից խուսափող, այնուամենայնիւ իրականութիւնը կմնայ իրականութիւն — այն՝ որ մեր ազգամիջեան վաճառքները ոչնչով չեն տարբերւում իրենց օտարազգի արհեստակիցներից:

Արդ, մենք, սոցիալիստներս, կարող ենք միայն որոշ չափով օգտուիլ մեր բուրժուա, կիսաբուրժուա և կալուածատէր դասակարգերի արամադրութիւններից և նրանց հետ հանրագործ անել՝ ինչոր վերաբերւում է սուլթանական ըէթիմը կործանելուն. այդ տարրերը մեզ կարող են օգնել այնքան, որքան որ սուլթանական ըէթիմը նրանց կաշկանդում է և իրենց դասակարգային բարգաւաճմանը ու շահերին սպառնում: Ուրիշ ժողովրդների մէջ այդ դասակարգն է թօթափել "օտարի լուծը". մեր մէջ այդ դասակարգը եթէ իր բոլոր մասերով բոլորովին անտարբեր չէ, բայց չի էլ կարելի ասել թէ՛ նա ազդակ է սուլթանական ըէթիմը Հայաստանից խորտակելու Դատին՝ այսինքն Հայկական Խնդրին:

Հայկական Խնդրին ծնունդ և կեանք տուողը եղել է և՛ է Հայ գիւղացին, Հայ արհեստավորը, Հայ սեպհականաւորը, այն տարրը որ տարին—տասներկու ամիս օրն ի բուն աշխատում է, տանջւում է, բայց վերջը մերի, անօթի, բռնութեան ծառաների ճիրանների զոհ գառնում: Այդ տարրը այն դասակարգն է, որ արտադրութեան միջոցներից բոլորովին սեպհականաւորութիւն է կամ արտադրութեան այնքան արամադրելի միջոց ունի, որ ինքը գտնուում է կորստեան անորոշի առաջը, և ահա՛ իր ուսը դէմ է տալիս սուլթանական ըէթիմը խախտելուն, որպէսզի ինքը լիաթոք շնչի, ապրի և բարօր կեանք ունենայ: Իր վերջնական նպատակին՝ արտադրութեան միջոցների ընկերացմանը հասնելու առաջին պայմանն է քաղաքական ազատ և համապատասխան Հաստատութիւններ ձեռք բերել, և Հէնց դէպի այդ կողմն էլ ուղղուած է այդ տարրի ոյժը՝ քան տարիից ի վեր:

Սոցիալիզմը ո՛չ թէ պէտք է "վտարել" Տաճկա-Հայ Դատից, այլ նրա անբաժան մասը պիտի անել, խնդիրը միայն հասկանալ պէտք է:

Առանց սոցիալիստական սկզբունքների վրայ կանգնած՝ Տաճկա-Հայ Դատը առաջ մղել բացարձակապէս անկարելի է, դործել ո՛չ միայն անյաջողութիւն կբերի, այլ ընկերային նոր ոճիւրի առաջ կկանգնենք:

Կովկասի Հայ պրոլետարը ի՛նչպէս իր օգնութիւնը պիտի տայ Տաճկա-Հայ Դատին, երբ նրա համար պարզ լինի, թէ այդ հարցը դրւած է "զուտ ազգայնական", "զուտ հայրենասիրական" հողի վրայ. նա կարող է օգնել, աջակցել սոցիալիստական մի գործի, բայց ո՛չ ազգայնական, ո՛չ "զուտ հայրենասիրական", ինքը դասակարգային կուռի մարտիկ և զոհ լինելով սահմանի մի կողմը, միւս կողմը չի կարող իր ունեցածին տրամագծօրէն հակառակ դադափարներ պաշտպանել և օգնել իր հակադիր դասակարգին, այսինքն այն դասակարգի ընկերոջ, որի դէմ որ ինքը արդէն կուռում է սահմանի այս կողմը: Այդ դէպքում նա կամայ սկսածայ ստիպուած է լռել կամ անտարբեր մնալ:

Ու եթէ մի օր բուն տաճիկ շահագործուող տարրը կարող պիտի լինի իր խական դրութիւնը հասկանալ և սուլթանական ըէթիմի դէմ պայքարող Հայ տարրին աջակցել, դա պիտի լինի, և կարող է լինել միայն սոցիալիստական և ո՛չ թէ "զուտ ազգայնական", "զուտ հայրենասիրական" հողի վրայ:

Ո՛ր կողմը որ խնդիրը դարձնենք՝ սոցիալիզմը ո՛չ միայն Տաճկա-Հայ Դատից անբաժան չպիտի լինի, այլ այդ Դատի լծակը, անկիւնաքարը պիտի հանդիսանայ, —մենք այդպէս ենք հասկանում ու այդպէս էլ համոզուած ենք:

Ս. ՍԱՊԱՆ-ԳԻՒԼԵԱՆ

ՓՈՒՐ ՀԵՅՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Հայ ազգաբնակչությանը զարեւելի վեր՝ իր ապրուստը հայթայթելու համար՝ գլխավորապէս երեք տեսակ գործով է զբաղուած, — առևտուր, արհեստ և հողագործութիւն:

Հայ վաճառականները և առևտրականները գրեթէ առևտրական հրապարակին տիրապետած էին: Այդ դատակարգը շահու սիրուն համար՝ ծով ու ցամաք իր ոտքին տակը առնելով, ամէն տեսակ ճրցումի և խոչնդոտների յաղթելով՝ յաջողած էր առևտրական գործը իր ձեռքին մէջ կեդրոնացնել մինչև 1895-ը:

Փակագծի մէջ պէտք է յիշել, որ մինչև 1895 թուականը, այդ դատակարգը ո՛չ միայն դեմ էր եղած ամէն տեսակ յեղափոխական շարժման, իր կարողութեան սահմաններու մէջ դանդաղան խոչնդոտներ յարուցանելով յեղափոխական գաղափարի ծաւալմանը, այլև նա ամենաջերմ պաշտպանը և ջատագովն էր հանդիսացած սուլթանական լեփիի պահպանութեանը և յարատևութեանը, այն նկատուածով՝ որ իրերի այդ գրութիւնը իրեն աւելի միջոց կուտար օգտուելու ընդհանուր քայքայումէն, ինչպէս և՛ տիրապետող անկարգ վիճակէն, ու տարբեր ազգաբնակչութեան պատկանող ժառանգներու ազդեցութենէն և այսպիսով իրեն շահագործուածը աւելի մեծ չափով յառաջ կտանէր:

Վրայ հասաւ 1895-ի կոտորածը:

Թուրք կառավարութեան գործիք խուժանը ընականաբար չը կրցաւ ծանել անոնց այդ նուրբ նկատումներուն ու հաշիւներուն մէջ, ուստի իր կողոպուտի հոսանքը աւելի մեծ չափով դեպի այդ դատակարգը ուղղեց: Ի հարկէ խուժանն ալ իր հաշիւն ունէր: Ու փոխադարձ այդ հաշուառութեան և հաշուետուութեան հետևանքը այն եղաւ, որ հայ առևտրականները բոլորովին զրկուեցան իրենց ունեցածներէն, ու ասոկէ ալ աւելի ինկան կարօտ և խեղճ վիճակի մէջ:

Հրապարակի վրայ երևացին սնանկացած և չունեւոր հայ վաճառականներու կողքին, թուրք մեծափարթեմ վաճառականներ և առևտրականներ, որոնք իրենց դրամագլխի մեծ մասը կազմած էին հայ վաճառականներու կողոպուտէն ու թալանէն:

Կոտորածէն ու կողոպուտէն շատ քիչ աղատ մնացած հայ առևտրականները, թէև պահ մը սթափեցան սուլթան համիտի բարերար լեփիմէն, և իրենց վստահութիւնը վերցուցին, բայց արդէն ուշ էր, որովհետև կեանքի, գոյքի, ապահովութիւն չը տեսնելով՝ մի կողմէն չը համարձակեցան իրենց մնացած փողերի գրամագլուխները շահագործութեան մէջ դնել, իսկ միւս կողմէն՝ շատ ու քիչ յանդուպն եղողներն ալ տեսան, որ այլևս առևտրական բոլոր ծածրանները իրենց առջև փակուած էին:

Առևտրականութեան երկուր ատենէ ի վեր ո՛չ մի նշանակութիւն չը ստուղ թուրք տարրը, երբ իր առջև տեսաւ շահու նոր սպարէզը մը, այն է վաճառականութիւնը, որով ալ աւելի կրնար իր շահը ընդարձակել և լայնան, կեալուրը իր հպատակութեան տակ առնել, — ամենաառաջինը կերպով գործի սկսաւ, ու յաջողեցաւ, որովհետև անոր զիրքը և պայմանները բոլորովին տարբեր էին, ամէն ինչ նպատակարար էր իրեն, թալանուելու, մնասուելու երկուքը չունէր, ան թէ՛ կրնար աւելի շահով ծախել իր սպարանքները և թէ՛ իր ապաւիկներն ալ չէին կորսուիլ:

Մի ուրիշ հանդամանք ալ շատ նպատեց թուրք վաճառականին և առևտրականին: Տաճիկ կրօնականները Գն թուականէն յետոյ՝ թէ՛ ճգիթներու և թէ՛ հրապարակներու վրայ, բացորոշ կերպով թուրք ժողովրդին ձեռք տուին այն գաղափարը թէ. "կեալուրին հետ առևտուր ընելը մեղք է": Խոստային և ճողային այդ պատուէրը բաւական էր, որ թուրք

զիւզացին իր ոտքը կարէր հայու խանութէն: Այդ հերքը չեղաւ: Սուլթանին պաշտօնականներն ալ օգնութեան հասան, անոնք ալ ո՛չ միայն կողմնակի, այլ ուղղակի կերպով և իրենց օրինակով թուրք ժողովրդին կը հասկցնէին, որ հայ ապրելի հետ անտեսական յարաբերութեան մէջ չը պէտք է մտնել, պէտք է հայերուն աղքատացնել. պէտք էր որ հարձառանային, որպէսզի կօծիթաճիներուն դրամ տային: Սուլթանի պաշտօնականները չէին զիտէր որ հայ վաճառականները աւելի իրենց ընկերներն էին և իրենց գաղափարներուն ոյժ տուողները, քան թէ հայ գօծիթաճիներուն:

Հայ վաճառականը, առևտրականը ասպարէզէն ստիպուեցաւ կամայ կամայ տեղի տալ, որովհետև անցեալէն իւրաքանչեւ չէր կրնար ապաւիկով առևտուր ընել և որովհետև անցեալին փորձէն տեսած էր, որ ապաւիկ տալուն հետեւանքը սնանկութիւն պիտի ըլլայ, իսկ Թուրքիոյ մէջ առանց ապաւիկի առևտուր չէր կրնար ըլլալ, եղածն ալ ո՛չ շահաւոր:

Հայ վաճառականը իր ունեցած հմտութեամբ և փորձառութեամբ հանդերձ՝ առևտուրէն մինչև երեկոյ ձեռքը խաւաճեցաւ կը նստի, իսկ կուշար՝ թուրք խանութպանը, որ արշինը ուղիղ բռնել անգամ չը գիտէր, յաճախորդներէ զուլա չը կրնար բարձրացնել:

Հայ վաճառականի անկումի պատճառներէն մէկն ալ այն եղաւ, որ նա չը կարողացաւ Պոլիս և այլ վաճառաշահ կեդրոններ երթալ, իր ուզած սպարանքները բերելու համար: Նա ստիպուած էր, նոյն իսկ իր չուզած սպարանքները սուղ գնով գնել թուրք մեծաձախ վաճառականներէն, որ երբեք ձեռնտու և շահաբեր չէր կրնար ըլլալ իրեն համար:

Հայ առևտրականը իր սպարանքները սպառելու համար՝ չէր կարող զիւզերը ևս տանել, որովհետև մէկ կողմէն ճանապարհին կողոպուտի կար, միւս կողմէն թուրք պաշտօնականները ամէն բոլեզ վնասը կրնային մեղադրել՝ որպէս յեղափոխական և երրորդ՝ զիւզերն ալ արդէն բռնած էին թուրք մանր առևտրականները, որոնք տեսակ մը գործակատարներ էին քաղաքները նստող թուրք մեծ առևտրականներուն:

Ահա՛ թէ ինչպիսի պայմաններու տակ հայ վաճառականութիւնը տեղի տուաւ թուրք վաճառականութեան:

Այդ շահաճող դատակարգը թէև քիչ մը ժամանակ արթնցաւ և սուլթանական լեփիմի դէմ խուլ տրտունջներ ըսկսեց յայտնել, բայց շուտով ճողցաւ ամէն ինչ և համակերպեցաւ իր ստրկական կեանքին, որովհետև սուլթանական լեփիմը տապալելու ոյժը իրեն մէջը չէր տեսներ:

Հայ արհեստաւորը օրը օրին սպրող դատակարգն է, իրեն սպրուստը հայթայթողը իր արհեստը և գործիքներն են: Մեծ թալանին՝ ան ալ իր ունեցած բոլոր գործիքներէն զըրկուեցաւ: Արհեստաւորներէն շատերն ալ սպանուեցան: Կենդանի մնացող արհեստաւորները, իրենց զբաղումը առաջ տանելու համար, պէտք ունէին գործիքի, թէև ընդհանրապէս մեծ արժէք ունեցող բան չէր, բայց և այնպէս գործիք չի կար ու դրամ ալ չունէր՝ նորը ձեռք բերելու համար: Վերջապէս ան ալ ընկաւ վաշխառուներու ձեռքը, ահազին տոկոսներով դրամ ձարեց և սկսեց աշխատութեան: Բայց թուրք ճողանքներու և կառավարութեան պաշտօնականներու պրօպագանդան ու պատուէրները հոտ ալ իրենց աղբեղութիւնը ունեցան:

Արդէն թուրք կառավարութեան միտումն էր, հայ արհեստաւորներու փոխարէն՝ տեսնել թուրք արհեստաւորներ: Եւ պէտք է տեսլ, որ նա ծառայեալ ալ իր նպատակին հասաւ:

Որքան որ հայ արհեստաւորը անհամեմատ բարձր է թուրք արհեստաւորէն—ու ոտեպ մըցակիցն է եւրոպայի արհեստաւորներուն, և իր արտադրածները կրնայ աւելի աման ծախել, բայց և այնպէս այսօր նա չի կրնար իր հացը ձարել. երեկոյեան տուն կը վեռադառնայ՝ ստեպ առանց կարողանալու դէթ իր

ղաւակացը պատառ ճը հաց տանելու: Քաղաքին ճէջ նա իր դէմ ունի թուրք արհեստաւորը, իսկ գիւղերը ապահովութիւն չի կայ, որ կարողանայ իր արհեստը ի գործ դնել և ապրիլ: Անոր այս ցաւին ու հոգին վրայ աւելցուցէք զինուորական և այլ բազմատեսակ տուրքերու օրէ օր ծանրանալը և դուք կ'ունենաք հայ արհեստաւորի վիճակի պատկերը: Այդ դեռ հերիք չէ, նա տարին մի քանի անգամ կը բանտարկուի, իր տուրքերը վճարել չը կրնալուն համար, եթէ քանի ճը յաճախորդ ալ ունի, անոնք ալ կը ցրուին խանութը զոյգ գանելով:

Թէև օրէնքով արհեստաւորի գործիքները, թէ՛ պետական տուրքի և թէ՛ պարտքի համար, ծախելը արգելուած է, բայց թիւերը մէջ օրէնքին ո՛վ կը նայի: Առաջին անգամ հայ արհեստաւորին տունը կը խուզարկեն, երբ բաւականաչափ բան չը գտնեն, իր խանութին մէջ գտնուած բոլոր գործիքները դուրս կը թափեն և կը ծախեն:

Դանք երկրագործ դասակարգին:

Անցեալի մէջ հայ երկրագործներէն շատերը իրենց սեպհական հողը ունէին, որով կարող էին գէթ չոր հաց մը ճարել, բայց 95-96-ին անոնք ալ իրենց ունեցածները կորսնցուցին անդառնալի կերպով:

Մեծ թաղանի ժամանակ՝ ասոնց ալ երկրագործական գործիքները, անասունները, սերմերը և այլն, ամբողջապէս յափըշտակուեցան, և այդպիսով հայ գիւղացին ստիպուեցաւ թուրք ու քիւրտ աղաներէն, պէկերէն, քաղաքացի վաշխառուներէն ծանր տոկոսով դրամ փոխ առնել, իր ցանքերը ընելու և անհրաժեշտ սերմնացուն, գործիքները և անասունները գնելու համար:

Եւ այդ պայմաններու տակ՝ հայ երկրագործը գործի ըսկըտեց, բայց երբ իր արտը հնձեց և իր կալը ծեծելու վրայ էր, յանկարծ չորս կողմէն վրայ թափուեցան՝ պէկ, աղա, միւլ-թէգիմ, վաշխառու, ոստիկան և այլն, ու ամէն մէկը իր բաժինը տանելով՝ հայ գիւղացին մնաց դարձեալ առանց մի կտոր հացի և իր ամբողջ տարուայ աշխատանքով հաղիւ կարողացաւ իր պարտքերի տոկոսը միայն վճարել: Երբ եւկան ձախորդ տարիները, երաշտը, անասուններու համաճարակը, և այլն, հայ գիւղացին բոլորովին խրուեցաւ պարտքերու մէջ ու ստիպուեցաւ իր պահանջատէրերուն մի կերպ բուարարութիւն տալու համար, իր հողերը գրաւ դնել՝ երկրագործական պանդալի ձօս: Երբ երկրագործական պանդան տեսաւ թէ պայմանաժամին հայ գիւղացին չը կարողացաւ իր պարտքերը վճարել, նրա 100 ոսկի արժամ հողը՝ ապօրինի միջոցներով՝ 10-20 ոսկիի թիւրքին ու քիւրտին ծախեց: Ու այսպիսով հայ երկրագործը քայքայուեցաւ, որով ծեծաւ ծառածը իրականացաւ կառավարութեան ծրագիրը շատ տեղեր:

Վերջին տասը տարուայ մէջ՝ այս և ուրիշ պատճառներով հայ երկրագործի հողը շատ տեղեր իր ձեռքէն խլելցին և նա այսօր դարձած է հոգաբարի մի աշխատաւոր:

Այժմ ծառածը հասկանալի է թէ ի՞նչու հայ գիւղացին, արհեստաւորը, նոյն իսկ առեւտրականը իր վաթանը թողած, իր սիրելիները ձգած, կը պանդխտէ օտար երկիրներ, այնտեղ իրեն համար աշխատանք փնտռելու:

Թուրք կառավարութիւնը կուգէր հայը հողէն արծուտախիլ ընել և նա ոչ մէկ հրէշային միջոցի առաջ կանդ չուտաւ, իր հակամարդկային ծրագրները իրագործելու համար:

Եւ այս պայմաններու տակ իր երկրէն դուրս վտարուող հայ գիւղացին կամ արհեստաւորը չէ որ անտարբեր պիտի մնայ դէպի հայ մեղ. Գործը, այլ անոր առաջին հարցը պիտի ըլլայ, թէ ո՛վ իրեն այդ փիճակին հասցուց:

Եւ երբ, իր տունը տեղը թողած, իր ունեցածները յափըշտակութեան ենթարկուած, ուրիշ երկիրներու գործարաններու մէջ չարաչար աշխատող հայ գիւղացին, հայ արհեստաւորը

իր թշուառութեան գլխաւոր պատճառներէն մէկը կը տեսնէ թուրք բռնակալութեան մէջ, այլեւ անոր համար հրաժայական պարտականութիւն և իրաւունք է իր ունեցած և արամաղրելի, բարոյական ու նիւթական միջոցներովը, ջանալ տալալել այդ զազիր բռնակալութիւնը և անոր տեղը հաստատուել մի այնպիսի դրութիւն, որ ինքը ունենար բարօր կեանք, տէր իր արտադրածին ու աշխատանքին:

ՍԻՓԱՆ,

ՀՈՂԱՅԻՆ ԽՆԴԻԻ ԵՈՒՐԶԸ

Միապետական կառավարութեան քաղաքական շահերը երբեք չեն թողաւորել յօգուտ բանւորութեան կամ գիւղացիութեան օրէնքներ հրատարակել: Եթէ վարուելիս լինէր այլ կերպ, այդ դէպքում ցարի կառավարութիւնը պիտի հաշտուէր ժողովրդական կառավարութեան մաքի հետ, իսկ այդ քայլը նրան ծահացու վէրք պիտի հասցնէր: Եւ ո՛վ կուզենայ որ իր ձեռքով իր ծահուան վճիռը ստորագրէ: Եթէ մի քանի զիջումներ անուծ են, այն ևս այն մտքով, որ պրոլետարիատի քաղաքական տրամադրութեան վրայ որոշ ազդեցութիւն կարողանան թողնել: Ահա թէ ի՞նչու վերջին ժամանակներս հրատարակուծ են օրէնքներ մէկ-մէկու հակառակ և երբեմն նոյն իսկ ծիծաղելի: Հրատարակածների մէջ ամենահետաքրքրականը հոլային խնդրին վերաբերուած օրէնքներն են, որոնցով միապետութիւնը ուզում է իբր թէ բաւարարութիւն տալ գիւղացիութեան թէ՛ քաղաքական և թէ՛ անտեսական պահանջներին:

Անցեալ անգամ մենք յոյց տուինք, թէ ի՞նչ արժէք ունէր հոկտեմբեր 5-ի ուկալը գիւղացիութեան վերաբերուած (Հնչակ թ. 11), ներկայ յօդուածով մենք կուզենք լուսաբանել միապետութեան մի այլ քայլը՝ դարձեալ նոյն խնդրին վերաբերուած: Մեր խօսքը գիւղական բանկերի մասին է:

Ի՞նչ է այդ հիմնարկութիւնը:

Գիւղական հողային բանկը սկսեց իր գործունէութիւնը 1883 թ. ապրիլից: Գիւղը հողի կարօտութիւն ունի ի հարկէ վաղուց, և յիշեալ բանկը այդ ժամանակ իսկ զայիս էր՝ իբրեւ թէ, այդ կարիքներին բաւարարութիւն տալու համար: Բանկը գիւղացիներին փոխառութիւն էր տալիս այն դէպքում, եթէ գիւղացիք ցանկանային հող ձեռք բերել բանկի միջոցով: Ինչ ասել կուզէ, գիւղացիք դնած հողը պիտի գրաւ դնէին բանկում: Մինչդեռ այդ գործը դրուած էր հէնց սկզբից այնպիսի հիմքերի վրայ, որ գիւղացիները ո՛չ մի օգուտ չէին ստանում այդ բանկերից: Փոխառութիւնը արւում էր նորմալ գնահատուածից յետոյ, իսկ այդ գնահատումը բաւականին բարձր էր. օրինակ՝ խրաքանչիւր տղամարդի վրայ համայնական հողատէրերի համար 125 ռուբլի, իսկ ձկների վրայ՝ 500 ռուբլի խրաքանչիւր գեւեատինից:

Մինչդեռ փոխառութիւնը արւում էր դրանից պակաս: Ուրեմն, որպէսզի գիւղացիք կարողանան ձեռք բերել հող, ստիպուած էին իրենց միջոցներից փողով լրացնել գնահատման արժէքի պակասը: Բայց որովհետեւ գիւղացիները գուրկ էին միջոցներից, հասկանալի է, որ այդ դէպքում նրանք պիտի հող ճարէին կողմնակի, մասնաւոր ծարրկանց միջոցով: Իսկ թէ այդ մասնաւոր վաշխառուները ո՛րչափով էին թեթեւացնում գիւղացիների դրութիւնը, — տեղորդ է ասելը, դա յայտնի է ամէնքին:

Ինչ ասել կուզէ, բանկը իր գործունէութիւնը չկարողացաւ դարգացնել, իսկ 1885 թուականից աւելի ու աւելի ընկաւ: Իսկ եթէ ասանք որ բանկը շարունակ միջնորդի դեր է խաղացել հարուստ հողատէրերի և հողի կարօտ գիւղացի-

ների մէջ, պարզ կլինի թէ այդ Հիմնարկութիւնը ունի շահերն է պաշտպանել: Բանկից աւելի օգտուել են միջին կարողութեան տէր գիւղացիները: Վերեւ բերած օրինակները պարզեցին մեր ասածները: Բանկը պահանջում է բարձր տոկոսներ (այժմ այդ տոկոսները համեմատաբար իջեցրած են), և գիւղացիները ստիպուած են միշտ լրացնել պահանջը մասնաւոր կերպով: Իսկ միջին չքաւոր գիւղացիները կարող են այդ պակասը տալ, քանի որ փող չունեն — և այդպիսիները, ինչ ասել կուզէ, ստիպուած են զիմել վաշխառուներին և նրանց անյայտ կոկորդը պցել իրենց վերջին ձիերը և արտադրող միջոցները:

Ուրեմն օգտուեց ո՛չ թէ չքաւոր գիւղացին, այլ շահեցան հարուստ հաշտերը, որոնք կարողացան ձեռնառն պայմաններով ծախել իրենց հողերը: Դրա վրայ աւելացրէք և այն հանգամանքը, որ բանկը շատ տեղ բարձրացրել էր հողի գինը: Փիւղացիները ստիպուած էին այժմ աւելի տուժել: Գնահատածի պակասը քանի գնում բարձրանում էր: Օրինակ «Նաշա Դէլօ» աւելով, 90 թւականներին մի դեռեալին հողի համար տալիս էին 8 ռուբլի, մինչդեռ 91 թ. արդէն 21 ռուբլի, 904 թ. 30 ռուբլի:

Ուրեմն, եթէ գիւղացին ուզէ հող գնել բանկի միջոցով՝ պակասը միայն պիտի տայ մի դեռեալին համար 30 ռուբլի, չհաշուած ի հարկէ և որոշուած տոկոսները:

Ահա այդ Հիմնարկութեան պոչից է կպել այժմ ցարի կառավարութիւնը և նրանով ուզում է բաւարարութիւն տալ գիւղացիների պահանջներին:

Այս անգամ միայն մի նորութիւն էլ է մտցրել, կապ մեկ է հողերը կարգաւորելու համար յանձնաժողովներ: Յիշեալ ծարմիրները կազմում են աստիճանաւորներից և խաշոր հողատերերից. պրանց օգնութեան են զալիս նաև երեք գիւղացիներ գաւառական ժողովներից ընտրուած և նահանգապետների հաւանութեամբ:

Միջին պէտք է ասել որ այդ յանձնաժողովներից էլ հողազուրկ գիւղացիները այնքան օգուտ կստանան, որքան և բանկից: Եւ մի թէ խաշոր հողատերերը բազմելով այդ յանձնաժողովներում իրենց շահերի դէմ կգնան:

Բայց այսքանը միտքարական է, որ գիւղացիները արդէն հասկացել են կառավարութեան կեղծ հոգացողութիւնները: Չորս ամիս է անցել այն օրից, երբ հրատարակուեց օրէնք, որի գործութեամբ ուղեղի հողերը պիտի արուի գիւղացիական բանկին, իսկ արքունական հողերը ծախու հանուին, բացի այդ՝ մի տարուց աւելի է, որ գիւղացիական բանկը գործում է նոր Հիմնադրութեամբ, — մինչդեռ այդ բոլոր «բարենորոգումները» չստացուեց և ո՛չ մի արդիւնք:

Փիւղացիների կեանքը ճիշդ է որ մի որոշ բարեփոխութեան չենթարկուեց, այլ որ գլխաւորն է գիւղացու արածադրութիւնները յօգուտ կառավարութեան չլիքուեց: Լրագիրները հազարովում են, որ գիւղացիական բանկը գնել և սակարկել է երկու միլիոն դեռեալներից աւելի հող, սակայն այդ ահագին քանակութիւնից գիւղացիութեան ձեռքը շատ քիչ հող է անցել: Մինչև անգամ ամօթ է ասել՝ գիւղացիութիւնը չի ստացել մի տասնեակ հազար դեռեալին հող:

Իսկ հողերը կազմակերպող յանձնաժողովները սկսելով նորերս գործել՝ հէնց սկզբում պատահել են այնպիսի արգելքների, որ պատրաստ են հրաժարուել այդ գործից: Այդպէս՝ Կիւզի և ուրիշ տեղերի յանձնաժողովները արդէն խընդիր են յարուցել այդ յանձնաժողովները բարեփոխելու մասին:

Ահա թէ ինչ է բանկի և հողային յանձնաժողովների արածները և բերած օգուտները:

Աւելորդ է ասել, որ բանկը և խաշոր հողատերերից կազմած յանձնաժողովները չեն որ պիտի հանեն գիւղացուն իր թշուառ դրութիւնից: Փիւղական կեանքը գտնուած է միա-


պետական երկաթեայ օղակների մէջ: Իր միակ ելքը գիւղացիութիւնը պիտի որոնէ հէնց իր մէջ, իր յեղափոխական շարժումների մէջ: Միայն այդ շարժումները կմարքեն պրոլետարիատի ուղին: Իսկ պատպրտային գիւրտութիւնները, բանկերը ճիշդ է որ չեն թեթեւացնել գիւղացու դրութիւնը, այլ աւելի ու աւելի կը փաթաթեն նրան միապետական ճարպիկ ցանցերի մէջ: Գիւղական ինդիւրը իր բաւարար լուծումը կստանայ այն ժամանակ, երբ գիւղական պրոլետարիատը կյարէ սօցիալ-դեմօկրատիայի ծրագրային պահանջներին. գիւղացին միացնելով իր սցծը քաղաքային բանուորական կազմակերպուած ոյժին՝ մի անգամ ընդ միշտ վերջ կտան ցարի կառավարութեան:

Իսկ մինչ այդ՝ միապետական նէյնիմներն անդալիստ կլինեն:

ՓԱՆԻՔ

6, Յունի. 1907

ԱՍՏՐԱԽԱՆ



Ն Ո Ւ Ի Ր Ա Տ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Յունուար 1-ին լոյս տեսաւ «ՊԱՅՔԱՐ» օրաթերթի առաջին համարը. երկրորդ համարը արդէն պատրաստ և լոյս տեսնելու վրայ էր, երբ յունուար 3-ի գիշերուայ ժամը 12-ին, նահանգապետի սուանձին կարգադրութեամբ և հրամանով, կառավարութեան խուլիգանները մտան տպարան, գրաւեցին շարածքը, իսկ միւս օրը կնքեցին խմբագրութիւնը՝ յայտարարելով որ «ՊԱՅՔԱՐ»-ը դադարեցրուած է իր «ճայրահէղ վնասակար ուղղութեանը համար»:

Չնայած կառավարութեան խտուրթիւններին, Պետական Դոմայի ընտրողական պալատին էլ աւելի եռանդուն կերպով շարունակում է բոլոր կուսակցութիւնների կողմից: Կառավարութիւնը ուղղակի մի խուլիգանական արշաւանք է սկսել ձախակողմեանների դէմ, աչքի ընկնող «անբարեցոյիւն» ձերբակալում է, կարծելով թէ այդ կերպ պիտի կարողանայ ժողովրդի իրաւունքները ոտնակոխել, նրա ձայնը խեղդել և մի հլու, հպատակ, գործիք Դոմա ստեղծել:

Բայց ցարի կառավարութիւնը այս անգամ էլ չարաչար սխալուած է, և նորից փորձով կհամոզուի որ հին, բարի օրերը անցել են անդաւնալի կերպով:

Հիմնադիր Ժողով, ահա՛ ընդհանուր և անմիջական պահանջը:

ԹԻՖԼԻՉՅԻ

Յունի. 11 (հ. տ.), 1907

ԹԻՖԼԻՉ

Ն Ո Ւ Ի Ր Ա Տ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՊՐԱՅԼԱՅԻ մասնաճիւղի գանձարանում ստացուել են.—

«Փալաւակ» խմբից.— Մարուի եւ Տրայֆուս 5 ական, Մ. Մ. 15, Բազէ 10, Պ. Մարտիրոսեան 6 ֆրանկ:

«Մուրաւա» խմբից.— Ներսէս, Ժառ, Երկաթ, Կորկի, Մ. Ի. Կաղազով 5 ական, Մալսոյ, Խաբլոն 3 ական, Աւան եւ Միւնիթար, 10 ական ֆրանկ:

«Արծիւ» խմբից.— Արտեմիս 20, Ժերոնի, Եփրատ, Գ. Ի. 5 ական, Համադասով 4, Եւսարշ 3, Խոսրովիդուխտ, Գ. Յ. 2 ական, Ա. Ծ. 1 ֆրանկ:

«Կալալակ» խմբից.— Նամիկուտ 20, Խորհուրդ 15, Զարեան 12, Զօրապետ, Կարպուտ 10 ական, Մ. Ս., Թուր, Պ. Մ., Բըռնուտ 5 ական, Սուրհանդակ 2 ֆրանկ: Ընդհ. գումար 233 ֆրանկ:

«ԱՆԻՈՅԺ» մասնաճիւղի գանձարանում ստացուել են.—

Գ. Կ. Բ. 200, Ոմն Եուշեցի 200, Փանեանց, Լեոնական, Բուդի, Սեւ Սարեցի, ոմն Տաճկաստանցի, Սեւ Ալեքեցի, երկու եղ-

քարք չամանդացի, Արմիկ 50 ական, Ոմն, Վահրամ, Մ. Փան-
հանց 30 ական, Մուսանթարձիկ երկու հոգի 40, Փայտակարանցի
երկու հոգի 60, Սոկրատ 100, Բջնեցի 20, Տելեմակներ 31 ղումն:
Ընդհ. գումար 1141 ղումն

ՄԱՐԱԿԱՅԻ ճամնաճիւղի գանձարանում՝ 1905 ճարտից
ձինչև սեպտ., ստացուել են. —

Պրօպից 20, Վահագնից 10, Վահագնից 30, Ս. Կամա-
րականից 2, Կիսամեայ ամսագրաց 6, Ս. Կի-ից, Խուրշիդից,
Տաշրունուց, Վահագնից, Վշնասպից, Վշնասպից, Վ. Տ. Վար-
դանանից և Վրէժունուց 2 ական, Վրէժունուց 1, Խոսրովից 30,
Եւս Խոսրովից 20, Խուրշիդից 10, տիկ. Նասամանից 10, Յարու-
թիւնից Մ. Ն. Աւագ ծնամբ 50, Կ. Բեկլարեանից 50, Գ. Ստե-
փանեան 120, Իվ. Յովհաննէսեանից 42, Պրօպից 30, Վրէժունուց 24,
3. Տէր Վարդանեանից, Վենայից, Էլօ-Խանից և Վահագնից 12
ական, Մարգարիտի խմբից 140, Վրէժ Խմբից 50, Մարտիկ
խմբից 30, Կողմնակի նուէր 198 ղումն: Ընդհ. գումար 935 ղումն:

ՊՈՒՐԿԱՅԻ ճամնաճիւղի գանձարանում ստացուել են. —

«Հայաստան» խմբին. Գայծ 12, Որսերդ 4, Բաբելէն 11, Պոմ-
պաճի 8, Եմաւոն-Պարոյր 13, Բանակ 3, Կրակ 13, Մուրատ 10
Գմբ. 74 ԼՖ:

«Վասպուրական» խմբին. Յուսիկ 5, Տիկոց 5, Վէժ 7, Ռումբ 1,
Գժողը 2, Արգեղոս 6, Եփրատ 7, Գնդակ 1, Վարդ 2, Զարմայր
3, Զաւէն 4, Փոթորիկ 2, Զէյթուն 4, Զամր 4: Գմբ. 53 ԼՖ:
«Մասուն» խմբին. Կայծակ 13, Վիշապ 12, Գետ 12, Մուրճ
1, Արտաւազդ 13, Հայկազն 8, Հրացան 3: Գմբ. 62 ԼՖ:

«Արծիւ» խմբին. Տէնոր 3, Ա. Արայ 13, Ժայռ 4, Մ. Հայկ 13,
Ուրի 5, Կողպատ 6, Ահարկիչ 2, Սարսափ 1, Արգար 1: Գմբ. 53 ԼՖ:
Տիկունց «Կարմիր խաչ» խմբին. Դեղձու 5, 50, Աշխէն 4, Սըր-
բուհի 1, Սէլվի 7, 50, Արուսեակ 5, 50, Խաղուհի 2, 50, Մարիամ 1, 50,
Համի Մայր 8, Մարգրիտ 9, Ոսկոյ 5, 50, Մարդա 3, Մ. Մանուկ-
եան 3, 50, Հոբերսիլ 4, Մ. Թաշճեան 3, 50, Հայկանուշ 2, Ման-
նիկ 3, 50, Սաթնիկ 4, Լուսիկ 0, 60: Գմբ. ԼՖ 74, 10

Երեկոթի մը առթիւ ընկերներէ հաւարուած 11, նուէր Ֆիւ-
պեցի ծամբորդէ մը 3: Գմբ. 14 ԼՖ

Սթ-Ջակորայի «Մամիկոնեան» խումբ. Զարմայր 10, Արգեղոս
5, Մուսնի 9, Ալիք 2, Տաճար 9, Պրոկտոր 4, Սասուն 9, Մահ 3,
Օրան ծոր 9, Արարատ 8, Պարթեւ 4, Մուրճ 8, Սոխակ 6, Խը-
րժմ 9: Գմբ. 95 ԼՖ

Սթրալճայի «Վրէժիկներ» խումբ, Համր 12, Հուր 11, Կայծակ
11, Փայլակ 11, Խամխումեան 2, Արապ 11, Սմբատ 1, Սիմ-
բէշեան 11: Գմբ. 70 ԼՖ

Ռատնէ մահալէի «Մուրատ» խմբին. Զէնք 21, Շղթայ 17,
Դիւցազն 7, որոտում 13, Եմաւոն 20, Սիփան 10: Գմբ. ԼՖ 88
Գարաբունարի «Վրէժ» խումբ. Ալիշան 9, Հայրիկ 6, 60, Ա-
լըբաշ 5, Հրատ 15, Սոցիալիստ 3: Գմբ. ԼՖ 38, 60

Հանգանակութիւն ի Ռատնէ Մահալէ Բ. Մ. 2, Գ. Դ. 1, Ե. Մ.
2, Կ. Օ. 2, Հ. Մ. 1, Մ. Վ. 2, Խ. Ե. 1, Կ. Տ. 1, Ն. Մ. 1, Ն. Յ.
1, Ի Սթարա Զակորա Դ. Ս. 5, Ս. Ռ. 2, Խաւմբի ընկերներէն 18,
ի Գարաբունար Մ. Խ. 3, Ե. Դ. 3, Պ. Պ. 2, Պ. Ա. 2, Ա. Վ. 2,
ի Սթրալճա Ն. Մ. 2, Ս. Մ. 2, Վ. Յ. 2, Դ. Խ. 1, Մ. Յ. 2, Յ. Ս.
2, Ա. Յ. 1, Գմբ. 63 ԼՖ

Սէվրիկի նորակազմ «Ժիրայր» խմբին 17 ԼՖ

Ընդհանուր գումար ԼՖ 701, 70

«ՓԱՐՈՍ» ճամնաճիւղի գանձարանում, 1906 փետր. ամ-
սից ձինչև 1907 յունուար, ստացուել են.

Քաղաքի ամսագրեր

Փետր. ամիս No No26՝ 15, 20՝ 10, 21՝ 3, 19՝ 2, 22՝
2, 23՝ 1, 24՝ 1, 25՝ 3, 29՝ 2, 30՝ 1, 31՝ 1, 32՝ 2, 33՝
2, 34՝ 1, 37՝ 2, 38՝ 1, 39՝ 40, 1 ր., 27՝ 50, 28՝ 50,
35՝ 50 Կ., No 5-ից ապառիկ ճնացած 60 ր.:

Մարտ ամիս No No 4՝ 1, 5՝ 5, 6՝ 10, 10՝ 1, 11՝ 1,
13՝ 1, 14՝ 1, 15՝ 2, 16՝ 3, 17՝ 3, 18՝ 3, 19՝ 2, 20՝ 10,
21՝ 3, 22՝ 2, 23՝ 1, 24՝ 1, 25՝ 3, 26՝ 15, 29՝ 2, 30՝ 1,
31՝ 1, 32՝ 1, 33՝ 1, 34՝ 1, 38՝ 1 ր., 27՝ 50, 28՝ 50, 35՝ 50 Կ.:

Ապրիլ ամիս No No 4՝ 1, 5՝ 5, 7՝ 10, 6՝ 1, 10՝ 1,
11՝ 1, 13՝ 1, 14՝ 1, 15՝ 2, 16՝ 3, 17՝ 3, 18՝ 3, 19՝ 2,
20՝ 10, 20-ից նուէր 10, 21՝ 3, 22՝ 1, 23՝ 1, 24՝ 3, 25՝
2, 26՝ 15, 29՝ 2, 30՝ 1, 31՝ 1, 32՝ 2, 34՝ 1, 38՝ 1, 44՝
5 ր., 27՝ 50, 28՝ 50, 35՝ 50 Կ., 40՝ 1 ր. 50 Կ., Հրեայ քա-
ղաքի Կ-ի տանեակից 20, 40, Հրեայ քաղաքի Ս-ի տանեա-
կից 25, 40, Սասուն խմբ. 7, 60, Վասպուրական խմբ. 3 ր. 60 Կ.,
Ա-ից 4, No 38-ից 2 րուբլի:

(Հարունակելի)

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Վ Ա Ն

Հնչակեան Կուսակցութեան Ծրագրի (Երրորդ
Հրատարակութեան) Գ-րդ էջի Առաջին և Երկրորդ
թուումներին որպէս Հարունակութիւն պիտի կարդա-
հետեւայր.

«Հնչակեան Կուսակցութեան գործունէութեան
թատերաբեմն է և՛ Ռուսաստանը:

«Ռուսաստանի մէջ Հնչակեան Կուսակցութիւնը
գործում է որպէս մի Սոցիալ-Դեմոկրատ Կուսակ-
ցութիւն, Համաձայն իր Հիմնական սկզբունքներին:

«Հնչակեան Կուսակցութեան Կովկասի և Ռու-
սաստանի ճամնաճիւղերը կազմում են Հնչակեան
Կուսակցութեան մի մասը և, Համաձայն Կուսակցու-
թեան Ծրագրին ու Կազմական Ներքին Կանոնադրին,
աջակցում Տաճկա-Հայ ազատագրութեան Գործին՝
Հայկական Խնդրին:»

Հնչակեան Կուսակցութեան 15-րդ հրատարակութիւնը
ԿԵԴԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի



Հնչակեան Կուսակցութեան 15-րդ հրատարակութիւնը

ՍՕՑԻԱԼԻԶՄ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ

Պ Ր Ե Կ Ի

ԸՆԴԴԻՍԱԽՈՍԱԿԱՆ ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՐՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ Է

- 1) Յառաջաբան, Ս. ՍԱՊԵՆ-ԳԻՒԼԵԱՆԻ
- 2) ՔԱՂԱՔԱՅԻ ՌՈՒԱՆԵՒԻ ԱՏԵՆԱԽՈՍԱՌԻԹԻՒՆԸ
- 3) ՔԱՂԱՔԱՅԻ ԺՕՐԷՍԻ ԱՏԵՆԱԽՈՍԱՌԻԹԻՒՆԸ. (Կոմու-
նիզմը և Հայրենիքները — Պրոլետարիատը և Հայրենիքները —
Դրաման — Իմաստակութիւններ և Հակասութիւններ — Պը-
րօպագանդա և Հակում)
- 4) ՔԱՂԱՔԱՅԻ ՀԵՐՎԷՒ ԱՏԵՆԱԽՈՍԱՌԻԹԻՒՆԸ
- 5) ԸՆԿԵՐԱԿԻՅ ԼԻԲԵՐՏԱԴԻ ԱՏԵՆԱԽՈՍԱՌԻԹԻՒՆԸ
- 6) ՔԱՂԱՔԱՅԻ ԺՕՐԷՍԻ ՊԵՏԱՍԻԱՆԸ

ԳԻՆՆ Է 40 ՍԱՆՏԻՄ

Կլիմանկուրի Սոցիալիստ Հասարակապետական Կոմիտէի
նախաձեռնութեամբ Հրապարակային մի ձեռն Հակաճառութիւն
տեղի ունեցաւ, ձախ No 27-ին, 1905, Էլիզե-Մոնմարտում,
«Սոցիալիզմի և Հայրենիք» թանկ:
Որովհետեւ «Սոցիալիզմ»-ի և «Հայրենիք»-ի յարաբերութեան
խնդիրը ճանաչող շահագրգռութիւն ունի և՛ Հայ ժողովրդի
ու ճանաչողապէս նրա սոցիալիստ տարրերի համար, ուստի
այդ հետաքրքիր վիճարանութեան թարգմանութիւնը տարլո՛ւ
յանձնարարում ենք այն հայ ընթերցող Հասարակութեանը:

M. BELLART — 7, Rue Campagne-Première 7,
(France) PARIS.

Imprimeur-Gérant Gabriel FARJAT